



ԹԵՍԱՂՈՆԻԿԷԻ (ՍԱԼՈՆԻԿ) ՀԱՅՑԾԱԽԸ 1990-2017 ՇՐՋԱՆԻՆ՝

ՅՈՎԻԿ ԳԱՍԱՊԵԱՆ
(kassapianhovik1977@gmail.com)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Աշխատության նիւթը կը վերաբերի Թեսաղոնիկէի (Սալոնիկ) հայոցախի արդի իրավիճակին, անոր ժողովրդագրա-ընկերային կտրուկ փոփոխութեանց, որոնք տեղի ունեցած են 1988-90ականներէն յետոյ, երբ Հայաստանի Հանրապետութենէն եւ Վրաստանէն մեծաթիւ հայեր

հաստատուեցան հոն: Արդարեւ Թեսաղոնիկէի մէջ, 1990էն ետք, կը ձեւատրուի նոր համայնքային պատկեր մը, նոր հրամայականներով, նոր խնդիրներով եւ դժուարութիւններով:

Այս ուսումնասիրութեամբ պիտի փորձենք լուսաբանել որոշ հիմնախնդիրներ, որոնք կապուած են Սալոնիկի հայոցախի մերօրեայ վիճակին: Այս աշխատասիրութիւնը կ'ընթանայ միջ-ուսումնքային սկզբունքի հիման վրայ: Օգտագործած ենք հարցաթերթիկներու եւ անհատական հարցազրոյցներու դրութիւնը: Փորձած ենք անմիջական դիտարկումներով եւ դաշտային հետազոտութեամբ պարզաբանել Սալոնիկի հայութեան ծագումնաբանական շերտաւորումը, անհատական գործօնը, մտածելակերպը եւ իրենց ազգային ինքնադրսետուման եւ ինքնագիտակցութեան աստիճանը: Կը կարծենք, որ այս թեզը իր դիտարկումներով եւ եզրակացութիւններով կրնայ որոշ ընդհանրութիւններ ունենալ ո՛չ միայն Յունաստանի, այլեւ ժամանակակից արեւմտեան Ափիւղքին հետ:

Սալոնիկահայութեան մասին գրականութիւնը սահմանափակ է եւ կը վերաբերի յատկապէս անցիլի հին ժամանակաշրջանին²: Հեղինակը իրել

¹ Երեւանի Պետական Համալսարանի պատմութեան ֆակուլտէտի սփիւռքագիտութեան ամբիոնի մագիստրական թեզ, 2016: Աշխատանքիս համար կարեւոր խորհուրդներ ստացայ ասարտաճառիս ղեկավար Տաթև Մինասեանին կողմէ, որուն կը յայտնեմ շնորհակալութիւնս:

² Այս ուսումնասիրութեան պատմական տուեալները քաղուած յատկապէս Ա. Մակարեանի *Յուշագիրք Թրակիոյ եւ Մակեդոնիոյ հայ գաղութներու* (Սելանիկ, Աթլաս, 1929) եւ Իոանիս Իսախոթիսի *Η Αρμενική Κοινότητα της Θεσσαλονίκης, Ιστορία, Σημερινή Κατάσταση, Προοπτικές* (Թեսաղոնիկէի հայկական համայնքը,

Սալոնիկի հայօճախի անդամ, կը ջանայ հանդէս գալ նաեւ որպէս սկզբնաղբիւր:

Դաշտային հետազոտութիւնները կատարուեցան 2016ի ամռան, Սալոնիկի մէջ:

ՀԱՅՕՃԱԽԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՒ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Թեսաղոնիկէն (Thessaloniki, Salonique, Selanik) հիմնուած է Ք.ա. 315ին, Հիսիսային Յունաստանի Մակեդոնական Թագաւորութեան Քասանտրոս թագաւորին կողմէ: Թեսաղոնիկէն Աղեքսանդր Մակեդոնացիի քոյրն էր³:

Քիզանդական ժամանակաշրջանին, Սալոնիկը ապրեցաւ իր պատմութեան ամենափայլուն շրջանը՝ վերածուելով կայսրութեան երկրորդ կարեւորագոյն քաղաքին՝ Կոստանդնուպոլիսէն ետք:

1430ին քաղաքը ինկաւ օսմանեան տիրապետութեան տակ՝ նուաճուելով Մուրատ Բ.ի կողմէ, բայց պահպանեց իր տնտեսական եւ մշակութային կեդրոնի հանգամանքը, ունենալով նաեւ բարձր ռազմավարական դիրք:

1840-1912՝ քաղաքը - քառապատկուած բնակչութեամբ - դարձաւ պալքաններու ամենանշանաւոր նաւահանգիստը: 27 Հոկտեմբեր 1912ին, պալքանեան պատերազմին ընթացքին, քաղաքը ազատագրուեցաւ օսմանեան լուծէն եւ կցուեցաւ նորաստեղծ անկախ Յունաստանին:

Այսօր, Սալոնիկը կը համարուի արդիական երոպական քաղաք մը, կը պահպանէ իր կարեւոր առեւտրամշակութային համբաւը իբրեւ Յունաստանի Հանրապետութեան երկրորդ ամենամեծ քաղաքը եւ Պալքանեան Թերակղզիի «մեթրոպոլիս»⁴:

Սալոնիկի հայութեան պատմական պարբերացումը հնարաւոր է կատարել հետեւեալ ձեւով.-

Ա. փուլ.- Ժ. դարէն (քիզանդական ժամանակաշրջան) մինչեւ Օսմանեան Կայսրութեան անկման ժամանակները՝ ԺԹ. դարու վերջերը:

Բ. փուլ.- 1880-90ականներէն մինչեւ Փոքր Ասիոյ աղէտը՝ 1922-23:

Գ. փուլ.- կը սկսի 1922ի Իզմիրի եւ այլ փոքրասիական շրջաններու եւ Արեւելեան Թրակիոյ հայ գաղթականներու տեղահանութեամբ եւ Հիսիսային Յունաստան տեղափոխութեամբ: Այս փուլը կը տեւէ մինչեւ 1946-47, երբ տեղի կ'ունենայ ներգաղթը:

պատմութիւն, ներկայ կացութիւն, հեռանկարներ), University Studio Press, Thessaloniki, 2005) աշխատութիւններէն:

³ Etymology՝ <https://www.wikiwand.com/en/Thessaloniki> (25-12-2016): (Հին յունական բառ Թէսալոնիկի, որ կը նշանակէ թեսալացիներու դէմ յարթանակ):

⁴ Thessaloniki: Brief history՝ <http://www.inthessaloniki.com/en/thessaloniki-brief-history>, (20.06. 2016):

Դ. փուլ.- կը սկսի 1948էն եւ կը տեւէ մինչեւ 1990, երբ ՀՀէն եւ Վրաստանէն զանգուածային արտագաղթով հայեր կը հաստատուին Թեսաղոնիկէ:

Ե. փուլ.- կը սկսի 1990ին:

«Թեսալոնիկէի հնագոյն եւ սկզբնական հայ գաղութին ճշգրիտ [հիման վրայ] թուականը՝ անձանօթ կը մնայ մեզի: Սակայն օտար հեղինակներու վկայութեան համաձայն Մեծն Աղեքսանդր Մակեդոնացիին քրոջ անունին նուիրուած այս քաղաքը, մօտ 7 հազարեակ մը փարի առաջ լսած է հայ ոտքերու թփուրոցը կամ հայ բարբառի հնչիւնը»⁵: Առաջին արձանագրութիւնը, ուր կը յիշատակուի հայկական ներկայութիւնը Սալոնիկի մէջ, կու գայ ԺԱ. դարէն, երբ կը յիշատակուի «Յովհաննէս հայ» անուն արհեստաւոր մը⁶:

Ընդհանուր առմամբ, Սալոնիկի հայութեան վաղ ներկայութիւնը բաւական մշուշոտ է, բայց կասկած չկայ, որ բիզանդական զօրքի հայ վարձկաններ եկած են Սալոնիկ՝ ծառայելով կայսերական բանակին մէջ⁷: Հետեւաբար կրնանք ըսել, թէ հայերու ներկայութիւնը Սալոնիկի մէջ կ'առնչուի ընդհանուր բիզանդական պատմութեան⁸:

1185ին Սալոնիկի մեթոքապոլիտ (առաջնորդ) Եւդայթոսի վկայութեամբ, զանազան հայկական ենթօճախներ գոյութիւն ունէին Սալոնիկի եւ ընդհանրապէս Մակեդոնիոյ եւ Թրակիոյ գաւառներու մէջ⁹:

Հակառակ անոր որ հատուկենտ վկայութիւններ կան Մակեդոնիոյ եւ Թրակիոյ հայկական գաղութներուն շուրջ, ասոնք սակայն չեն վերաբերիր մշտական ներկայութիւն ունեցող հայերուն¹⁰:

Փաստեր կան, որ 1872էն սկսեալ միքանի հարիւր հայեր կը հասնին Թրակիա, մասնաւորաբար՝ Ալեքսանդրոպոլիս, իբրեւ բանուորական ուժ՝ մասնակցելու համար Սալոնիկ-Պոլիս երկաթուղիի կառուցման աշխա-

⁵ Մակարեան, էջ 84:

⁶ Հայ գաղթաշխարհի պատմութիւն (միջնադարից մինչեւ 1920թ.), Հտր. 2, խմբ.՝ Վարդգէս Միքայէլեան, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն հրատ., Երեւան, 2003, էջ 48:

⁷ Բիզանդական բանակին մէջ հայերու ներկայութեան համար կան վաղուց ի յայտ եկած աղբիւրներ՝ Յուստինիանոս կայսրի Ժամանակէն (528): Այդ վկայութիւնները կը հասնին մեզի Պրոկոպիոս Կեսարացիին կողմէ, որ կը յիշատակէ 17 հայ զօրահրամանատարներ եւ հայերէ բաղկացած բազմաթիւ գունդեր (Մակարեան, էջ 85. նաեւ՝ Հ. Բարթիկեան, *Գաղտնի պատմութիւն Պրոկոպիոս Կեսարացիի*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1987, էջ 11-12):

⁸ I. Hassiotis, Giula Kassapian, *The Armenian Colony of Thessaloniki*, Սելանիկ, 1990, էջ 258:

⁹ X. M. Μπαρτικιάν, *Ελληνισμοσ και Αρμενία*, Ίδρυμα Γουλιανδρό Χόρν, Աթէնք, 1991, էջ 75-76:

¹⁰ Մակարեան, էջ 85:

տանքներուն¹¹: Սալոնիկահայության մասին առաջին եւ ստոյգ վկայութեան կը հանդիպինք 1881ին, երբ պոլսահայ Մկրտիչ Մինասեան կ'այցելէ Սալոնիկ ուր կը հանդիպի մօտ 20-25 անդամներէ բաղկացած փոքրաթի գաղութի մը: Ասոնք եկած էին Փոքր Ասիայէն եւ Կոստանդնուպոլիսէն որպէս օսմանեան պետական պաշտօնեաներ կամ անհատ ձեռներէցներ, առետրականներ, արհեստաւորներ են¹²: Այդ գաղութին մասին, սակայն բաւարար գրաւոր արձանագրութիւններու կամ արխիւային նիւթի չենք հանդիպած, թերեւս որովհետեւ գաղութը կազմակերպուած չէր¹³:

Սալոնիկահայութեան պատմութեան մէջ կարեւոր անկիւնաքարձ կը նկատուի 1884ը, երբ կը կազմուի առաջին ազգային մարմինը («բաղային մարմին»)՝ խորհրդակցական ժողովի մը կողմէ ընտրուած: Մարմինը կը վաւերացուի Պոլսոյ պատրիարքարանին կողմէ¹⁴: 1885ին առաջին անգամ Պոլսոյ պատրիարհարքարանէն Սալոնիկ կ'ուղարկուի Տէր Միքայէլ քինյ. Յովհաննէսեանը, որ կը մնայ ընդամէնը մէկ տարի¹⁵:

1888ին հայկական գաղութը, շնորհիւ Գրիգոր Բաշայեանի եւ տէր Արսէն քինյ. Խաչոյեանի ջանքերուն, կը յաջողի օսմանեան տեղական մարմիններէն նուէր ստանալ հողամաս մը, որ օգտագործուի իբրեւ ազգային գերեզմանատուն: Սալոնիկի մէջ հայկական եկեղեցի կառուցելու համար, 1887ին գաղութը կը կազմակերպէ հանգանակութիւն, որուն կը մասնակցին տեղաբնակ թէ ոչ-տեղացի հայեր¹⁶:

6 Նոյեմբեր 1903ին կը կատարուի Թեսանողիկէի Ս. Աստուածածին եկեղեցոյ նաւակատիքը, որ անշուշտ համապատասխան լիազօրութիւն ստացած էր տարի մը առաջ սուլթան Ապտուլ Համիտ Բ.ի կողմէ: Տաճարը կ'արժէ մօտաւորապէս 100 օսմանեան ոսկի եւ կը կառուցուի իտալացի ճարտարապետ Vitaliano Poselliի (1838–1918) կողմէ¹⁷: Եկեղեցին կը մնայ մինչեւ այսօր սալոնիկահայութեան հոգեւոր եւ ազգային կեդրոնը եւ կը հանդիսանայ Սալոնիկի նորագոյն պատմութեան յուշարձաններէն մին:

1887-88ականներէն ունենալով իր գերեզմանատունը եւ եկեղեցին (որ ենթակայ էր Պոլսոյ պատրիարքարանին), Սալոնիկի հայութիւնը կը ստանայ մնայուն տեղաբնիկի հասկացութիւն: Առ այդ, հոգեւոր հովիւներ կ'ու-

¹¹ Σοφία Ζαχαροπούλου, “Οι αρμένιοι πρόσφυγες στην Αλεξανδρούπολη 1922-2013 (Από το Αραράτ στον Όλυμπο θέματα αρμενικής λαογραφίας) επιμέλεια Μ. Γ. Σέργις - Ελ. Κ. Χαρατσίδης - Γαρούφ. Γ. Θεοδωρίδου, εκδοτικός οίκος Κ&Μ Άντ. Σταμούλης, Թեսաղոնիկէ, 2015, էջ 207-21:

¹² Նոյն, էջ 86:

¹³ Նոյն, էջ 88:

¹⁴ Մակարեան, էջ 89:

¹⁵ Նոյն, էջ 91:

¹⁶ Նոյն, էջ 92:

¹⁷ Փոսելլի մեծ ներդրում կ'ունենայ Սալոնիկի առեւծի ճարտարապետական պատմութեան մէջ (Պատմութիւն, էջ 56):

ղարկուին Պոլիսէն՝ սպասարկելու եկեղեցւոյ ու գաղութին ազգային եւ հոգեւոր կեանքին:

Ընդամէնը միքսանի տասնեակ հայ ընտանիքներէ բաղկացած գաղութին թիւը կ'աճի եւ 1885ին կը հասնի մօտ 183ի¹⁸, ինչը կը մղէ տեղի քահանան, որ 1887ին փայտաշէն մատուռի մը մէջ հիմնէ դպրոց մը, 10-12 աշակերտով, իսկ ինք կը գործէ իբրեւ ուսուցիչ: 1907ին աւելի կանոնակարգուած շէնքի մը մէջ կ'ընթանայ հայերէնի դասաւանդումը՝ 30-35 աշակերտներով¹⁹, մինչ գաղութին թիւը 1908ին կը բարձրանայ 300ի²⁰: 1911ին աշակերտներու թիւը կը բարձրանայ 50ի: Բայց, պալքանեան պատերազմին պատճառով դպրոցը կը փակուի եւ կ'օգտագործուի իբրեւ օսմանեան բանակի հայ զինուորներու ապաստարան²¹: Համաշխարհային պատերազմէն ետք հայոց թիւը կը բարձրանայ 500-600ի²²:

1917ին Սալոնիկ կ'ապաստանին օսմանեան բանակի հայ զինուորներ: Սակայն, անոնցմէ քիչեր կը հաստատուին հոն: 1923ին Արեւելեան Փոքր Ասիոյ աղէտին հետեւանքով Սալոնիկի բնակչութեան ընդհանուր թիւը կտրուկ բարձրացում կ'արձանագրէ: Հազարաւոր յոյներ Արեւելեան Թրակիայէն, Փոքր Ասիայէն, Իոնիայէն անմխիթար վիճակի մէջ կը հասնին Սալոնիկ: Յոյն գաղթական զանգուածներուն մէջ կային նաեւ մեծաթի հայեր: Ըստ որոշ հաշուարկներու 1919-23՝ Յունաստան տարագրուած հայերուն թիւը կը հասնէր 85,000ի²³: Յիրաւի, Հայոց Յեղասպանութեան եւ փոքրասիական կոտորածներու հետեւանքով, «Յունաստանը... դարձաւ լայն բացուած դարպասներով հիւրընկալ ապաստան ահաւոր սպանդից ճողոպրած ու փախստական դարձած բիրաւոր հայերի»²⁴: Հայ գաղթականները Սելանիկը կը նկատէին բնակութեան համար «յարմար միջավայր»²⁵:

Այսպիսով, շուրջ 250-300 հոգի հաշուող Սալոնիկի հայօճախը, 1923էն ետք, քանի մը տարրուան ընթացքին կը վերածուի 10-11 հազար հաշուող

¹⁸ Hassiotis, Kassapian, էջ 215:

¹⁹ Մակարեան, էջ 98-99:

²⁰ Hassiotis, Kassapian, էջ 215:

²¹ Մակարեան, էջ 100:

²² Hassiotis, Kassapian, էջ 215:

²³ Χασιώτης, էջ 24:

²⁴ Յովիկ Մելիքսէթեան, *Արեւմտահայերի բռնագաղթը եւ սփիւռքահայերի հայրենադարձութիւնը Սովետական Հայաստան*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1975, էջ 113:

²⁵ Դորա Սաքայեան, *Ձմիւննեան արկածներս*, Արօտ հրատ., Մոնթրէալ, 1997, էջ 65:

հայկական մեծ գաղթօճախի²⁶, եւ իր տեղը կը գրաւէ սփիւռքահայ քարտէսին վրայ²⁷:

Յաջորդող տարիներուն կը կազմակերպուի փոքր ներգաղթ մը դէպի Սովետական Հայաստան եւ շուրջ 3000 հայեր կը հայրենադարձուին: Այս եւ այլ պատճառներով հայօճախին թիւը 1929ին կը նուազի շուրջ 6500ի²⁸:

Բ. աշխարհամարտի պլեկոծ օրերը անդրադարձ կ'ունենան սալոնիկահայութեան կեանքին վրայ: Բ. համաշխարհային պատերազմին՝ գերմանական բանակը կը գրաւէ Յունաստանը: Փոթորկալի այդ ժամանակամիջոցին, մեծ թիւով հայեր կը մասնակցին յունական դիմադրական շարժումին եւ կը զոհուին²⁹: 1946ին, քաղաքի թաղային խորհուրդն ու Աթենքի ազգային իշխանութիւնը կը յաջողին յունական կառավարութենէն բանակ չճառայելու խոստում ստանալ այն հայերուն համար, որոնք ատենին հեռացած էին Օսմանեան Կայսրութեան տարածքներէն եւ ապաստանած Յունաստան³⁰:

Կեանքի ահաւոր վատ ու ծանր պայմանները, ինչպէս նաեւ 1945էն ետք Յունաստանի ներազգային պատերազմը պատճառ կը դառնան որ հայեր առաւել խանդավառուին հայրենադարձութեան գաղափարով: 14 Օգոստոս 1946ին Սալոնիկէն կը մեկնի ներգաղթողներու առաջին կարաւանը: Յաջորդ տարուան Օգոստոս 16ին, Փիրէաս նաւահանգիստէն ներգաղթեալներու երկրորդ զանգուած մը կը մեկնի՝ յունահայ հայրենադարձներու ընդհանուր թիւը հասցնելով ամբողջ քան 18,000ի³¹: Ինչպէս յունահայ գաղութը ներգաղթին պատճառով նուազեցաւ շուրջ 9635 հոգիի, նոյնպէս եւ Սալոնիկի հայութիւնը ներգաղթի պատճառով կորսնցուց իր 12,000 անդամներու 5/6ը, եւ 1947ին կը հաշուէր 462 ընտանիք կամ 1344 հոգի: Այս թիւը եւս մեծ արագութեամբ կը նուազի, երբ շատ հայեր կը գաղթեն Քանադա, Մ. Նահանգներ, Արժանթին, Ֆրանսա եւն.: Թիւի նուազումը նաեւ հետեւանք

²⁶ Χασιώτης, էջ 25:

²⁷ 'Diaspora': Beyond the Jewish Experience՝ http://www.academia.edu/9111245/_Diaspora_Beyond_the_Jewish_Experience (15.08.2016):

²⁸ Χασιώτης, էջ 26:

²⁹ “Η παρουσία των Αρμενίων στον Ελλαδικό χώρο” (Հայոց ներկայութիւնը յունական տարածքին մէջ), (Μέρος Β΄) <http://www.armenika.gr/koinotita/75-istoria-paroikias/609-i-parousia-ton-armenion-ston-elladiko-xoro-meros-b> (16.08.2016):

³⁰ Մակարեան, էջ 104-05:

³¹ Համլէտ Սարգսեան, «1946-1948թթ. հայրենադարձութեան աշխարհագրութիւնը եւ ժողովրդագրութիւնը»՝ «1946-1948 թթ. հայրենադարձութիւնը եւ դրա դասերը. Հայրենադարձութեան հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողով, գեղուցումների ժողովածու, [ա.խ.], Լիմուշ հրատ., Երեւան, 2008, էջ 48-59:

էր ուժացման³²: Հայօճախին անդամները, առաւել եւս Սալոնիկ ծնած (կամ մանուկ հասակին հոն գաղթած) նոր սերունդը ինքզինք փախստական կամ գաղթական չի զգար այլեւս: Միւս կողմէ, հայերու եւ յոյներու միջեւ խառն ամուսնութիւնները նորութիւն մը չէին, մանաւանդ արեւմտեան Փոքր Ասիայէն եւ Պոլիսէն եկած հայերուն համար³³:

1957ին Սալոնիկի մէջ արձանագրուած էին ընդամենը 1157 հայեր կամ 451 հայ ընտանիք³⁴: Կ'արժէ նշել, որ 1920-46՝ Սալոնիկի մէջ գոյութիւն ունէին հայկական ամէնօրեայ երեք դպրոցներ, որոնք կեանքի կոչուեցան հայկական բարեսիրական կազմակերպութիւններու՝ ՀԲԸՄի, ՀՕՄի եւ Կիւլպէնկեան Հաստատութեան կողմէ: Այս դպրոցները կը գոյատեւեն մինչեւ 1946 եւ կը փակուին աշակերտութեան թիւի կտրուկ նուազումով³⁵:

1947էն ետք Սալոնիկի հայօճախի նօսրացման պատկերը աւելի մատչելի դարձնելու համար, կը ներկայացնենք Թեսաղոնիկէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ամուսնութիւններու արձանագրութեանց մատեանը:

Հայօճախին պսակադրութեան պատկերը ըստ Թեսաղոնիկէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ամուսնութիւններու արձանագրութեանց տոմարի ³⁶	
տարի	քանակ
1933-1934	32
1945-46	35 ³⁷
1946-47	55
1947-48	31
1948-49	11
1949-50	14
1951-52	9
1952-53	7
1953-54	4
1954-55	4

1947-90՝ հայօճախը կ'ապրի կայացման եւ ընդլայնման շրջան մը: Ան չ'ունենար քանակական վերիվայրումներ, նկատի առնելով որ Միջին Արեւելքէն գաղթող հայեր սկսած են արտագաղթել եւ հաստատուիլ Աթենք կամ

³² *Book Review Armenian-Americans: From Being to Feeling Armenian by Anny Bakalian* http://www.academia.edu/5537852/Book_Review_Armenian-Americans_From_Being_to_Feeling_Armenian_by_Anny_Bakalian (16.09.2016):

³³ Ի.Կ. Χασιώτης, ΜΝΗΜΗ ΑΓΚΟΠ ΚΑΣΑΠΙΑΝ (1946-1990), Αρμενικός Πολιτιστικός Σύλλογος "Χαμασκαΐν", 1992, էջ 16:

³⁴ Χασιώτης, էջ 26-27:

³⁵ Նոյն, էջ 69:

³⁶ Թեսաղոնիկէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ամուսնութիւններու արձանագրութեանց մատեան (1932-2005) (ԹՍԱ):

³⁷ 1945ի այս պսակներէն առնուածն երեքը յոյն կանանց հետ խառն ամուսնութիւններ են (ԹՍԱ):

ալ երկիրներ³⁸: Ըստ Խասիոթիսի, 1960ականներուն Սալոնիկի հայերու երրորդ սերունդը նոր թափով մը մերձեցման եւ ընդգրկման ընթացք կ'ունենայ քաղաքի յունական հասարակական կեանքէն ներս³⁹:

Մեր կարծիքով 1946էն անդին կրնանք օգտագործել համայնք հասկացութիւնը իր բառին բուն իմաստով, քանզի մինչեւ այդ ժամանակ համայնք բառով նկատի ունէինք «Արմենոխորի» (հայոց գիւղ) եւ «Խարմանգէոյի» (խառն գիւղ) գաղթականները, ուր տարագրեալ հայութիւնը կը գոյատեւէր նեղլիկ փայտաշէն խրճիթներու մէջ:

Ընդհանուր առմամբ, 1946-90՝ ազգային կեանքը եղած է անդորր, առանց անկիւնադարձային իրադարձութիւններու: Սակայն պէտք է նշուի, որ 1957ին յունահայութեան ընդհանուր ազգային կեանքը պառակտուեցաւ եկեղեցական պատկանելիութեան ենթակայութեան խնդրի պատճառով: Յունաստանի թեմը մինչեւ 1923 վարչական առումով ենթակայ էր Պոլսոյ պատրիարքութեան եւ անուղակի ձեւով՝ մայր աթոռ Ս. Էջմիածինի կաթողիկոսութեան: 1957-58՝ յունահայոց թեմը անցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ենթակայութեան, եւ այդպէս կը մնայ մինչ օրս:

Բնականաբար, այդ փոփոխութիւնը որ խրախուսուեցաւ ՀՅԴի կողմէ, ստեղծեց լարուած իրավիճակ մը ընդդիմադիր թէ ոչ-դաշնակցական գաղափարները կիսող հայօճախին անդամներուն միջեւ⁴⁰:

ԹԵՍԱՂՈՆԻԿԷԻ ՀԱՅՈՃԱԽԻՆ ՀՈԼՈՎՈՅԹԸ 1990ԷՆ ՄԻՆՉԵՒ ՕՐՍ

Այս ժամանակաշրջանին համար չկայ համապատասխան գրականութիւն: Այսուհետեւ կը հիմնուինք մանաւանդ մեր անձնական դաշտային թէ այլ տուեալներուն վրայ:

1991ը հայ ժողովուրդի պատմութեան համար եղաւ անկիւնադարձային: Հայաստանի Գ. Հանրապետութեան հռչակումը եւ արցախեան ինքնորոշման իրաւունքի պայքարը ստեղծեցին ծանր տնտեսական եւ հասարակական իրավիճակ մը նորանկախ Հայաստանի Հանրապետութեան համար: Մեծաթիւ հայեր արտագաղթեցին սեփական հայրենիքէն, արտասահմանի մէջ որոնելով աւելի բարեկեցիկ ապագայ մը: Ասոնցմէ Յունաստան եկածները *«մեծամասնութեամբ եկած են անշուշտ ...աշխատանքի հեռանկարով, որոշ ժամանակի մը համար որպէսզի աշխատին ու յետոյ վերադառնան իրենց հայրենիքը: Սակայն այդ վերադարձը շարունակ կը յետաձգուի քանի որ կը յետաձգուի Հայաստանի տնտեսական բարելաւումը»*⁴¹:

³⁸ Χασιώτης, էջ 25:

³⁹ Նոյն, էջ 132:

⁴⁰ Նոյն, էջ 41-42: Դաշնակցութիւնը եւ իր յարակից միութիւններու գործունէութիւնը սկսած էր գաղթականութեան ժամանակներէն:

⁴¹ Նոյն, էջ 21:

Սալոնիկի հայօճախը եռաշերտ էր. առաջին շերտը 1880ականներու փոքրաթիւ հայերու խումբն է, որ եկաւ քաղաք որպէս Օսմանեան Կայսրութեան պաշտօնեայ կամ անհատ ձեռներէց: Ասոնք հանդիսացան հայօճախի հիմնադիր զանգուածը: Երկրորդ շերտը 1915-23ի տարագրեալ հայերու խոշոր զանգուածն է, որ ստեղծեց հայօճախին սփիւռքեան կառոյցները եւ եղաւ հայօճախի գլխաւոր մարդուժը: Երրորդ շերտը 1990էն ետք ՀՀէն եւ Վրաստանէն եկած հայերն են, որոնք հասան նօսրաթիւ, սակայն կայուն հայօճախի մը քով, եւ հանդէս եկան իբրեւ նոր ուժ: Այս շերտաւորումը պատմական առումով ճիշտ է, բայց եթէ խնդիրին մօտենանք աշխարհագրականօրէն, ապա պիտի հասկնանք որ եռաշերտաւորումը կը վերածուի երկշերտաւորման, քանի որ առաջին երկուքը իվերջոյ Օսմանեան Կայսրութեան հայեր էին, որոնք իբրեւ հայրենիք ունէին Կ.Պոլիսը, Փոքր Ասիան եւ Կիլիկիան: Առաւել եւս ունէին ընդհանուր հասարակ յայտարարներ: Անոնք կը խօսէին թրքերէն/արեւմտահայերէն/արեւմտահայ բարբառներ, ունէին նոյնատիպ սովորութիւններ ու կենցաղ: Ի տարբերութիւն ասոնց, 1990ին Սալոնիկ հասած հայերը ունէին որոշակի տարբերութիւններ, որոնք կը դժուարացնեն ներհայկական միաձուլման ընթացքը: Փակագիծով մը անդրադառնանք «համայնք» բառի հասկացութեան:

1880ականներէն 1990 «գաղութ» հասկացութիւնը եւ իր սահմանները բազմիցս փոխուեցան եւ միշտ չէ, որ գաղութի թիւը եւ ընդհանուր հայութեան թիւը նոյնացած են: Կարելի է ըսել որ միայն 1880-1922 եւ 1947-90ին է, որ հայութեան թիւը կը համընկնի (շատ քիչ բացառութիւններով) հայօճախին քանակին, երբ հայերը կ'ապրին Սալոնիկ եւ եկեղեցւոյ կառուցումէն առաջ եւ ետք հանդէս կու գան իբրեւ հայ առաքելական եկեղեցւոյ հաւատացեալներ: Իսկ 1923-47ի շրջանը պէտք է նկատել գաղթօճախ, երբ չկայ համարակալուած անդամներու ցանկ եւ անդամը կը բնակի Սալոնիկի մօտակայ գաւառներու գաղթակայաններուն մէջ: Իսկ այսօր, անհրաժեշտ է անելի քան երբեւէ հասկնալ եւ անելի ճշգրիտ ըմբռնել հայ համայնքի սահմանումը գործնական ու օրէնսդրական դիտանկիւնէ: Եթէ 2014ի թեմական ընտրութիւններուն Սալոնիկի շրջանի ցանկին մէջ արձանագրուած էր 756 հոգի (ներառեալ բաւական թիւով նոր եկող հայեր) կրնանք ենթադրել, որ ազգային կեանքին հետ (թէկուզ սահմանափակ կապ ունեցողներու եւ անչափահասներուն թիւը հաշուելով) կը հասնի 1000-1100ի: Իսկ, եթէ հաշուի առնենք այն փաստը, թէ 1990էն սկսեալ մօտ 15 հազար հայեր ներգաղթեցին Յունաստան (յատկապէս Հիւսիսային Յունաստան) ՀՀէն եւ Վրաստանէն՝ կու գանք այն եզրակացութեան, թէ համայնքային կեանքի հետ կապ ունեցողները պարզապէս տեղոյս հայութեան փոքրամասնութիւն մը կը կազմեն:

Հայոց եկեղեցին չունի նոր ներգաղթեալ ընտանիքներու ցանկ, այլ միայն թեմական ընտրացանկ մը: Ամուսնութիւններու եւ մկրտութիւններու ցանկերը յստակ պատկեր մը չեն կրնար մատուցել, քանի որ շատ հայեր

(նախկին ԽՍՀՄ-ին) ամուսնացած են կամ իրենց զաւակները մկրտած յունական եկեղեցիներու մէջ: Բայց եւ այնպէս այդ ցանկերը ուսումնասիրելով կարելի է տեսնել հայօճախին քանակային ձեւափոխումը տասնամեակէ տասնամեակ:

Նորահաստատ հայութեան թուաքանակի պարզաբանման ի խնդիր՝ դիմեցինք Աթենքի ՀՀ դեսպանութեան: Նախկին հիւպատոս Մարիամ Յարութիւնեանի (ՀՀ Աթենքի դեսպանութեան երրորդ քարտուղար հիւպատոս 2013-16) տուեալներուն համաձայն մեծ թիւով հայեր, որոնք չեն ստացած յունական քաղաքացիութիւն, ունին թղթաբանական (անձնագիրերու վերավաւերացում) հարցերու դասաւորման խնդիր դեսպանութեան ներկայացուցիչին հետ: Առ այդ, կը ներկայացնենք մեր դիմումին ստացած պատասխանը.

Յունաստանում բնակուող հայերի հիմնականում վերջին 20-25 տարիներին Հայաստանից արտագաղթածների թուաքանակը վերջին տարիներին զգալիորէն նուազել է կապուած Յունաստանի տնտեսական ճգնաժամի հետ: Յունաստանում, ինչպէս նաեւ այլ երկրներում, հայերի կոնկրետ թիւ նշելը շատ դժուար է: Դա կապուած է տարբեր գործօնների հետ: Մարդիկ կան կտրուած համայնքից, հետեւաբար չեն մասնակցում միջոցառումներին, ոմանք ունեն Յունաստանի քաղաքացիութիւն, հետեւաբար դեսպանութիւն չեն այցելում հիւպատոսական ծառայութիւնների համար, կան մարդիկ, որոնք բնակութեան եւ աշխատելու իրաւունք չունեն եւ որոշ դէպքերում վախենում են դեսպանութիւն այցելելուց: Բազմաթիւ չափահաս տղաներ բանակի խնդիր ունեն եւ նոյնպէս վախենում են դեսպանութիւն այցելելուց: Չնայած այն ամէնի՝ կարելի է ասել, որ Հիւսիսային Յունաստանում հայերի թիւը տատանում է 3000-5000ի սահմաններուն:

Հաւանաբար այս թիւը չի վերաբերիր միայն Սալոնիկի նահանգին, այլ կը ներառէ նաեւ մօտակայ գաւառներն ու Թրակիոյ որոշ շրջաններ: Պէտք է ընդգծել թէ բազմաթիւ հայեր տարիներէ ի վեր ստացած ըլլալով յունական քաղաքացիութիւն՝ որեւէ կապ չունին դեսպանութեան հետ: Կ'աւելցնենք նաեւ, որ բազմաթիւ իզական սեռի հայ քաղաքացիներ ամուսնացած ըլլալով յոյներու հետ, ստացած են յոյն քաղաքացիի կարգավիճակ: Այս հաշուարկին մէջ եթէ գումարենք հայաստանածին յունական ծագում ունեցող նախկին քաղաքացիները (Ալավերտիի, Հանքաւանի, Ախթալայի եւ Մեմանա-Արցախի եւ Երեւանի շրջաններէն), որոնք 1990-94էն ի վեր ստացան յունական քաղաքացիութիւն, թիւը շատ աւելի կը բարձրանայ, եւ - կ'ենթադրենք - հայութեան քանակը միայն Սալոնիկի ու մօտակայ շրջաններուն մէջ 5-6 հազարը կ'անցնի:

Հայօճախի թիւին խնդրով մեր դիմումին՝ հայօճախի իրաւաբան եւ թեմական ընտրութիւններու պատասխանատու Սեպուհ Սահաճեան տուաւ հետեւեալ պատկերը.- «2001ի ընտրութիւններուն արձանագրուած է 582 անձ, որոնցմէ միայն 311ը մասնակցած է ընտրութիւններուն: 2007ի ընտրացանկը կը հաշուէր 704 հոգի՝ 352 մասնակիցներով: 2015ի վերջին ընտրութիւններուն ընտրացանկի 931 հոգիէն միայն 263ը քուէարկած է: Այս թի-

ները կը վերաբերին չափահասներուն, ներառեալ փոքր թիւով «Հ քաղաքացիներուն, որոնք անդամագրուեցան հայօճախի պաշտօնական ցանկերուն»⁴²:

Ամփոփելով, կրնանք ըսել, թէ Սալոնիկի եւ ընդհանրապէս Հիւսիսային Յունաստանի մէջ ունինք մեծաթիւ լայնօրէն ցրուած հայեր եւ շատ սակաւաթիւ հայօճախներ (Սալոնիկ, Քաւալա, Քսանթի, Քոմոթինի, Ալեքսանդրոպոլիս, Տիտիմոթիսո, Օրեսթիատա): Այս համեմատականով կրնանք ենթադրել, որ Յունաստանի - եւ հաւանաբար արեւմտեան Ափիւքի - տարածքին տեղի կ'ունենայ բաւական արագ ծուլման եւ օտարացման գործընթաց մը:



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ՍԱԼՈՆԻԿԻ ՀԱՅՕՃԱԽԻՆ

Կրօնական կառոյց

Սալոնիկի հայկական եկեղեցին կը պատկանի Յունաստանի թեմին: Թեմն կը գործէ 1866ի ազգային սահմանադրութեան օրէնքներուն համաձայն (համապատասխան բարեփոխումներով, որոնք տեղի ունեցած են ժամանակի ընթացքին): Թեմական Խորհուրդը կ'ընտրուի հնգամեայ շրջանի մը համար (երբեմն կազմակերպական պատճառներով կ'երկարաձգուի ան): Թեմականները իրենց կարգին կ'ընտրեն ազգային իշխանութիւնը, որ կը բաղկանայ արդէն ընտրուած թեմականներէն: Ազգային իշխանութիւնը կը վաւերացնէ Յունաստանի հայկական եկեղեցիներու թաղային մարմինները՝ առաջարկուած անդամներէ բաղկացած: Ան կը ճշտէ նաեւ առաջնորդ սրբազանի կեցութիւնը: Բոլոր թաղային մարմինները, որոնք կը ներկայացնեն տուեալ շրջանի եկեղեցին եւ հայօճախը, պարտաւոր են իրենց տնտեսական պարտաւորութիւնները լիով կատարել ազգային իշխանութեան դիմաց: Թեմականներու թիւը կը կազմուի շրջաններու անդամագրուած թիւին հիմամբ: Այսպէս՝ Աթենքի շրջանը ունի 11 թեմական անդամ, որոնք կը ներկայացնեն Աթենք (կեդրոն), Նէոս-Քոսմոս, Փիրէաս-Քոքինիա եւ Քարէաս-Քեսարիանի հայօճախի եկեղեցիները: Սալոնիկը ունի 7 թեմականներ: Ըստ վերջին թեմական ընտրութեան հաշուարկի 6րդ թեմական ներկայացուցիչը կ'ընտրուի Սերէս քաղաքի նորակազմ հայօճախին կողմէ՝ առաջադրուած ընդհանուր Սալոնիկի քուէաթերթիկով: Արդա-

⁴² Անձնական խնդրանքով կատարուած հաղորդագրութիւն, գրաւոր ստացուած 2016ի ամառը:

րեւ, 2015էն իվեր Սալոնիկ եւ Սերէս քաղաքները կը կազմեն ընդհանուր ընտրական շրջան: Թրակիոյ մնացած քաղաքները կ'ընտրեն թեմական 3 ներկայացուցիչ:

Թեմական ընտրութիւններուն գլխաւոր դերակատարը Յունաստանի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (ՀՅԴ) միաւորն է, որ իր կարգին կ'ապահովէ կուսակցութեան պատկանող կամ համակիր թեմականներու հաւասարակշռութիւնը: Այդ պատճառով Աթենքի Ռամկավար Ազատական Կուսակցութեան միաւորը վերապահ մօտեցում ունի եւ չի մասնակցիր ընտրական գործունէութեան: Թեմական ընտրութիւններուն չեն մասնակցիր նաեւ Աթենքի Փերիստերիի շրջանի Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցին եւ իր ծխականները, քանի որ կապուած են Ս. Էջմիածնի մայր աթոռի հետ: Կրետէ կղզիի Իրաքլիոն քաղաքի Ս. Յովհաննէս եկեղեցին նոյնպէս մաս չի կազմեր թեմին, որովհետեւ կը գործէ իբրեւ անկախ շրջան՝ կապուած Պոլսոյ պատրիարքութեան⁴³:

Առ այդ, Յունաստանի հայ առաքելական թեմը պաշտօնապէս կը գոյացնէ հետեւեալ հայկական եկեղեցական եւ համայնքային շրջանները.-

1. Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդարանիստ եկեղեցի, Աթենք՝ կեդրոն:
2. Ս. Յակոբ եկեղեցի, Քոքինիա-Փիրէաս (Աթենքի շրջան):
3. Ս. Կարապետ եկեղեցի, Նէոս-Քոսմոս (Աթենքի շրջան):
4. Առանց եկեղեցական կառոյցի Քարէաս-Քեսարիանի:
5. Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցի, Սալոնիկ:
6. Ս. Իսաչ եկեղեցի, Քաւալա:
7. Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցի, Քսանթի (Արեւմտեան Թրակիոյ շրջան):
8. Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, Քոմոթինի (Կեդրոնական Թրակիա կամ Ռոտովիի շրջան):
9. Ս. Կարապետ եկեղեցի, Ալեքսանդրուպոլիս (Արեւելեան Թրակիոյ շրջան):
10. Ս. Գէորգ եկեղեցի, Տիտիմոթիսո (Արեւելեան Թրակիա կամ Էրոսի շրջան)⁴⁴:

Այս բոլոր շրջանները ունին իրենց թաղային մարմինները, որոնք կը զբաղին եկեղեցական եւ ընդհանրապէս համայնքներու խնդիրներով: Անոնք կը համադրեն միութենական աշխատանքները եւ կը մատակարարեն այն եկամուտները, զորս կը ստանան եկեղեցապատկան կալուածներէն:

⁴³ Armenians in Crete՝ <http://www.armenianchurch.gr/> (30.11.2016): Իդէպ, ընդհանրապէս Կրետէ կղզիի յունադասան եկեղեցիներ եւս չեն պատկանիր Յունաստանի արքեպիսկոպոսութեան, այլ կը գործեն որպէս մեկուսի շրջան, կապուած Պոլսոյ տիեզերական պատրիարքութեան:

⁴⁴ Արեւելեան Թրակիա ըսելով կը հասկնանք յունապատկան Թրակիան եւ ոչ արեւելեան Թրակիա հասկացութիւնը ըստ Լոզանի Պայմանագրին, որ կը պատկանի Թուրքիոյ:

Թաղային մարմինները ունին նաեւ համայնքի ներկայացուցիչի դեր, այդ հանգամանքով ալ հանդիպումներ կ'ունենան քաղաքապետի հետ կամ ուրիշ քաղաքական պատկան մարմիններու հետ եւն.:

Սալոնիկի թաղային խորհուրդը ներկայիս կը բաղկանայ ինը անդամներէ, որոնցմէ հինգը ՀՅԴ տեղւոյն կոմիտէութեան անդամներ են: Իսկ մնացած անդամները կա՛մ համակիր են, կա՛մ՝ չէզոք: Թաղականութիւնը կը ներկայանայ Սալոնիկի հասարակութեան եւ իշխանութիւններուն առջեւ իբրեւ համայն հայօճախի ներկայացուցիչ:

Թաղականութեան ժողովներուն կը մասնակցի նաեւ շրջանի հոգեւոր հովիւը իբրեւ խորհրդական՝ առանց քուէի իրատունքի: Թաղային վարչութիւնները - հակառակ որ ներքին կանոնագրութեամբ աշխարհականներէ կազմուած եկեղեցական մարմիններ են - ունին շատ անելի ընդլայնուած գործունէութիւն եւ պարտականութիւններ (տե՛ս՝ ստորեւ):

Աթենքի մէջ գոյութիւն ունին հայ կաթողիկէ եւ հայ աւետարանական եկեղեցիները, որոնք անմիջական կապ ունին ընդհանուր հայօճախին եւ ազգային կեանքին հետ, բայց մաս չեն կազմեր թեմական կառոյցին: Այդ երկու յարանուանութիւնները ունին իրենց հոգաբարձուները, ինչպէս նաեւ իրենց կրօնական դասը:

Հայերը Յունաստանի մէջ, օրէնքի սահմանումով, ճանչցուած են իբրեւ կրօնական համայնք: Օրէնսդրական եզրերը սահմանուած են Յունաստանի կրթութեան եւ կրօնքներու նախարարութեան կողմէ: Ըստ յօդուած 01ի, կրօնական համայնք կը կազմուի այն համապատասխան անձերէ, որոնք ունին տուեալ ծանօթ կրօնքի ընկալում եւ մնայուն կերպով հաստատուած են որոշ շրջանի մը մէջ: Անոնց գլխաւոր նպատակը կ'ըլլայ կրօնական բոլոր ծէսերու եւ պարտաւորութիւններու ճշգրիտ կատարումը:

Ըստ յօդուած 017ի, իւրաքանչիւր համոզում եւ դաւանանք որ իր ծիսական կատարումներուն եւ իր հանրային դրսեւորման համար կը գործէ պետական յատուկ արտօնութեամբ՝ կը ճանչցուի իբրեւ ծանօթ կրօնք: Իր նստավայրի (եկեղեցի, «Նոսոս» տաճար) կամ հաւաքատեղիի գործարկման համար պէտք է ունենայ համապատասխան արտօնագիր:

Յօդուած 013ով հետեւեալ եկեղեցիները եւ կրօնական նստավայրերը կը ճանչցուին իբրեւ օրէնքի սահմանէն ներս գործող հաստատութիւններ, կրօնական միաւորներ, կամ կրօնական համայնքներ.-

1. Անկլիքան Եկեղեցին.
2. Եթովպիական Օրթոտոքս Եկեղեցին.
3. Յունական Աւետարանական Եկեղեցին (իր հաւաքատեղերով եւ անշարժ գոյքերով).
4. Ղպտի Օրթոտոքս Եգիպտական Եկեղեցին (իր տաճարներով եւ անշարժ գոյքով).

5. Օրթոտոքս հայերու մեթրոպոլիս (իր համապատասխան եկեղեցիներով եւ անշարժ գոյքով)⁴⁵:

Յունաստանի սահմանադրութեամբ հաստատուած վերոյիշեալ յօդուածներու համաձայն, յայտնի է որ հայկական համայնքը ունի կրօնական եւ ո՛չ ազգային համայնքի ճանաչում եւ կարգավիճակ: Յունաստանը ունի մէկ ճանչցուած փոքրամասնութիւն, որ Հիւսիսային Յունաստանի Ռոտովի շրջանի իսլամական զանգուածն է: Ան կազմուած է մեծամասնութեամբ Փոմմաք ցեղէն: Շուրջ 98 հազար հաշուող այս փոքրամասնութեան գոյութիւնը սահմանուած է Լոզանի Պայմանագիրով եւ վաւերացուած յունական կառավարութեան կողմէ 1954ին, իբրեւ իսլամական փոքրամասնութիւն⁴⁶:

Իբրեւ ազգային եւ կրօնական համայնք գոյութիւն ունի նաեւ Յունաստանի Կեդրոնական Իսրայէլական Խորհուրդը, որու հովանիին տակ կը գործեն Աթենքի եւ Սալոնիկի իսրայէլական համայնքները⁴⁷:

Հակառակ անոր որ հայօճախը ունի կրօնական քան թէ ազգային կարգավիճակի օրէնքի սահմանում, սակայն իր կեցուածքն ու իր գործունէութիւնը ունին մշակութային եւ քաղաքական-ազգային դրսեւորում: Յունահայութեան գործելադաշտը շատ աւելի լայն ու բազմատեսակ է եւ չի կրեր նեղ կրօնական դաւանանքի սահմանափակ բնոյթ:

Արտաքին կապեր

Անցեալին, հայօճախին յարաբերութիւնները Յունաստանի Հանրապետութեան հետ կախուած էին աւելի յաճախ քաղաքական գործօններէ, որոնք ունէին արտաքին, քան՝ ներքին բնոյթ: Ա. աշխարհամարտի նախասեմէն ի վեր, յոյն կառավարութիւնները (նամանաւանդ Էլէֆթերիոս Վենի-

⁴⁵ Άρθρο 13 – Αναγνώριση νομικής προσωπικότητας υφιστάμενων Εκκλησιών και νομικών προσώπων τους. Σημ. <http://www.opengov.gr/ypereph/?p=1862> (10.09.2016): Օրթոտոքս բառը ունի պայմանական հասկացութիւն եւ ոչ-կրօնական կամ դաւանանքային ընկալում հայկական եկեղեցւոյ պարագային:

⁴⁶ Օրէնք 3065/1954 ΦΕΚ Α' 239,9, 10, 1954 (“Μουσουλμανική μειονότητα Θράκης” (Թրակիոյ մուսուլմանական փոքրամասնութիւն)՝ <http://www.hri.org/MFA/foreign/musmingr.htm> (10.10.2016):

⁴⁷ Օրէնք 1657/1951 ΦΕΚ Α' 20 (Η νομική προσωπικότητα των ισραηλιτικών κοινοτήτων και του Κεντρικού Ισραηλιτικού Συμβουλίου Ελλάδος (Κ. Ι. Σ. Ε.), τα ισραηλιτικά σχολεία και η φορολογία τους (Իսրայէլական համայնքներու եւ Յունաստանի իսրայէլական կեդրոնական խորհուրդի իրաւական կարգավիճակը, իսրայէլական դպրոցները եւ իրենց հարկային պարտականութիւնները)՝ https://www.kis.gr/index.php?option=com_content&view=article&id=1147:2015-01-22-08-19-32&catid=54:2009-05-27-11-10-17&Itemid=30 (12.10.2016):

զելլոսի օրօք) քաղաքական դրդապատճառներով, ունէին շատ բարեացակամ վերաբերմունք՝ յունահայ բնակչութեան հանդէպ⁴⁸:

Մեր օրերուն, նոյնպէս, հայօճախը կը վայելէ այդ բարեացակամ վերաբերմունքը՝ Յունաստանի պետութեան եւ տեղական իշխանութիւններուն կողմէ: Թաղային մարմինը եւ գրեթէ բոլոր միութիւնները ունին գործնական կապ եւ գործակցութիւն՝ նահանգապետարաններու ու քաղաքապետարաններու հետ: Փոխյարաբերութիւններու ուղեգիծը կը մշակուի նախապէս Հայ Դատի Յանձնախումբին կողմէ, որ պատասխանատու դեր ունի արտաքին քաղաքական կապերու մէջ:

1996ին Յունաստանի Հանրապետութիւնը ճանչցաւ Հայոց Յեղասպանութիւնը: Այդ ճանաչման բանաձեւին բովանդակութեան մէջ յատուկ յօդուածով մը, յունական պետութիւնը Ապրիլ 24ը հռչակեց «Մեծ Եղեռնի յիշատակի օր»: Հետեաբար, գլխաւոր ձեռնարկներու համար պետական տեղական մարմինները պարտաւորուած եղան կազմակերպելու եւ մասնակից դառնալու այդ ձեռնարկներուն: Առ այդ, Աթենքի, Սալոնիկի եւ Քսանթիի նահանգապետութիւնները պարտաւոր կ'ըլլան տնտեսապէս եւ բարոյապէս գործակցելու տեղական համայնքներու մարմիններու հետ համապատասխան ձեռնարկներու կազմակերպման համար: Բացի ատկէ, պետութեան ներկայացուցիչները պարտին ֆիզիքական ներկայութեամբ պատուել օրուան խորհուրդը⁴⁹:

Գործակցութեան եզրերը չեն սահմանափակուիր միայն Յեղասպանութեան առնչուող ձեռնարկներով. թաղականութիւնը եւ միութիւնները կապ ունենալով պատկան պետական մարմիններուն հետ կազմակերպած են ու կը շարունակեն կազմակերպել բազմաթիւ մշակութային, բարեսիրական, կրթական եւ այլ ձեռնարկներ՝ ստանալով երբեմն նիւթական օժանդակութիւն պետութեան կողմէ⁵⁰:

Այսօր, քաղաքական յարաբերութիւնները կը մնան ընդհանուր լաւ մթնոլորտի մէջ⁵¹: Այդ դրական մթնոլորտը կար եւ կը մնայ մինչ օրս, թէեւ ոչ-միշտ լիարժէք կ'օգտագործուի ան:

⁴⁸ Χασιώτης, էջ 117:

⁴⁹ Այդ ներկայութիւնը կար նաեւ վերոյիշեալ օրէնքի հաստատումէն առաջ եւս ի յարգանք հայոց զոհերուն:

⁵⁰ Վերջին տարիներուն Յունաստանի մէջ տիրող տնտեսական ճգնաժամին հետեւանքով խանգարուեցաւ այս նիւթական աջակցութիւններու դրութիւնը:

⁵¹ Որպէս օրինակ, թրքական հիւպատոսարանին դիմաց ՀՅԴ Երիտասարդականի նախաձեռնած 24 Ապրիլ 2007ի բողոքի ցոյցին հրկիզուեցաւ թրքական դրօշակի նմուշ մը: Այդ արարքը 1980ականներէն արդէն տեղի կ'ունենար Աթենքի եւ յետոյ՝ Սալոնիկի Մեծ Եղեռնի պահանջատիրական ցոյցերու ընթացքին: Սակայն, այդ տարին, թրքական դեսպանութեան կողմէ Յունաստանի արտաքին գործոց նախարարութեան բողոք ներկայացուեցաւ, որու հետեւանքով յունական ոստիկանութիւնը այդ արարքը գործող անձերը յանձնեց արդարադատութեան դատա-

Հանրային իրադարձություններ եւ յարաբերություններ

Վերջին տարիներուն, Աթենք եւ Սալոնիկ այցելող թրքական պատուիրակութիւններու դիմաց ցոյցերու ընթացքին միջադէպեր կը պատահին հայ ցուցարարներու եւ յոյն ոստիկաններու միջեւ: Բարձրացուած աղմուկը համապատասխան անդրադարձ կ'ունենայ յունական զանգուածային լրատուամիջոցներուն կողմէ⁵²:

2010-11ին, զոր օրինակ, Սալոնիկի նորընտիր քաղաքապետ Իանիս Պուֆարիսը, որ ընդհանրապէս դրական տրամադրութիւն ունի հայօճախին հանդէպ, առաջարկեց որ քաղաքիս կեդրոնական փողոցներէն մէկը անուանուի «Մուսթաֆա Քեմալ Աթաթուրք»ի փողոց: Այդ առաջարկին դէմ էին անշուշտ քաղաքիս հայօճախն ու քաղաքի պոնտոսցիներու, թրակիացիներու եւ փոքրասիացիներու միութիւնները: Թեկնածու քաղաքապետի եւ թաղականութեան ու ՀՅԴ Հայ Դատի Յանձնախումբին հետ հանդիպումին հայերու դժգոհութիւնը արտայայտուեցաւ:

Այդ որոշման դէմ էր նաեւ յոյն հասարակութեան մեծամասնութիւնը եւ հետեւաբար այդ նախագիծը չգործադրուեցաւ: 2013ի ամռան, արդէն իսկ ընտրուած քաղաքապետ Պուֆարիսը թաղային մարմնի ատենապետ Վարդգէս Գունտաքճեանին հետ այցելեցին Գիւմրի, ուր տեղի ունեցաւ քաղաքին եղբայրացումը Սալոնիկի հետ⁵³: Եղբայրացման որոշումը առնուած էր 2000ին, բայց զանազան ձգձգումներու պատճառով իրագործուեցաւ 2013ին: Այս եղբայրացումը մինչ օրս ունի միայն ձեւական եւ բարոյական բնոյթ ու ցարդ չեն մշակուած աւելի գործնական նախաձեռնութիւններ:

2015ին Եղեռնի 100ամեակին առթիւ Սալոնիկի քաղաքապետարանը որոշում կայացուց, որ Սալոնիկի մէջ կառուցուի Յեղասպանութեան յուշարձան մը: Քաղաքապետարանի նիւթական վիճակը շատ ծանր ըլլալուն, այս ծրագրի նիւթական պարտաւորութիւնը ինկաւ հայօճախին վրայ, եւ մինչ օրս չէ իրագործուած: Ընդհանուր առմամբ, թաղային մարմնի եւ Սալոնիկի քաղաքապետարանի ու նահանգապետարանի միջեւ գոյութիւն ունի փոխհասկացողութեան տրամադրութիւն եւ գործակցութեան բարի կամեցողութիւն:

Հայկական եւ յունական եկեղեցիներու միջեւ եղած յարաբերութեանց մասին կրնանք ըսել հետեւեալը. նախ՝ դժուար է տարանջատել Սալոնիկի,

րան, քրեական յանցանքի մեղադրանքով Յովիկ Գասապեանը ամբաստանուեցաւ, 15-10-2007ին դատավարութիւն ընթացաւ, եւ ան անպարտ հռչակուեցաւ:

⁵² Πορείες μνήμης για τη Γενοκτονία των Αρμενίων σε Αθήνα και Θεσσαλονίκη. Έκαψαν συμβολικά την τουρκική σημαία՝ http://www.huffingtonpost.gr/2016/04/24/koinonia-armenia-genoktonia_n_9767788.html (23.10.2016):

⁵³ Armenian minister of diaspora hosts Thessaloniki mayor՝ <http://www.tert.am/en/news/2013/07/16/hranushhakobyan-salonik/820128> (23.10.2016):

յունահայ թեմի եւ յունական եկեղեցիի յարաբերութիւնները ընդհանուր Հայ Առաքելական Եկեղեցոյ եւ Յոյն Ուղղափառ Եկեղեցոյ փոխյարաբերութիւններէն: Այսօր, Սալոնիկի հայկական եկեղեցոյ եւ քաղաքիս յունաց մեթոքոպոլիսի (առաջնորդարան) ներկայացուցիչներու միջեւ գոյութիւն ունին լաւ յարաբերութիւններ, որոնք բաւական դիւանագիտական են:

1990ականներուն, Սալոնիկի առաջնորդ Փանտելէիմոնաս Բ.ի ժամանակ, յառաջացաւ անտարբերութիւն եւ վանողական վերաբերմունք մը հայկական եկեղեցոյ հանդէպ, առանց հիմնաւոր պատճառի: 2004էն ի վեր Սալոնիկի նոր առաջնորդ Անթիմոսը ունի ակտիւ դրական մօտեցում հայկական եկեղեցոյ նկատմամբ քան իր նախորդը: Մեթոքոպոլիսի ներկայացուցիչները կը մասնակցին հայկական եկեղեցոյ հիմնադրման ամէնամեայ գոհաբանական աղօթքին (Նոյեմբեր 16): Սալոնիկի առաջնորդը եւս, կամ իր կողմէ ուղարկուած կղերական դասի ներկայացուցիչը, կը մասնակցի Հայ Դատի եւ Սալոնիկի նահանգապետարանին կողմէ կազմակերպուած Ապրիլ 24ի ամէնամեայ կեդրոնական ձեռնարկներուն: Հայ եկեղեցոյ կրօնաւորը եւ թաղային մարմնոյ ատենապետը ամէն տարի կը հրաւիրուին մասնակցելու Ս. Տիմոթիոսի տօնին: Արամ Ա. կաթողիկոսի Սալոնիկ կատարած հերթական այցելութիւններուն (1996, 2002, 2014) ներկայ գտնուեցան յունական եկեղեցոյ ներկայացուցիչները՝ առանց մասնաւոր հանդիպումի⁵⁴:

2005ին Հին Ջուղայի հայկական յուշակոթողներու քանդումին առթիւ, Աթենքի Հայ Դատի Յանձնախումբը եւ առաջնորդ Խորէն արք. Տողրամաճեան հանդիպում ունեցան Յունաստանի երջանկայիշատակ Խրիսթոտոլոս արք.ին հետ, որ բողոքագիր յղեց Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին:

2014ին Արամ կաթողիկոս իր երրորդ այցելութեան ժամանակ, Թրակիոյ Քոմոթինի քաղաքին մէջ պատմական հանդիպում ունեցաւ Կոստանդնուպոլսոյ տիեզերական պատրիարք Բարթողիմէոսի հետ⁵⁵, ուր քննարկուեցան Թուրքիոյ մէջ գտնուող Սիսի աթոռին պատկանող ազգապատկան կալուածներու հետ կապուած խնդիրները:

Սալոնիկի Արիստոտելի Համալսարանի աստուածաբանական հիմնարկի ուսանողները ամէն տարի, օտար կրօնքներու դասընթացքներու ծրագրի շրջագիծին մէջ կը կատարեն այցելութիւն հայկական եկեղեցի, ուր պա-

⁵⁴ Արամ Առաջինն այցելել է Սալոնիկ եւ հանդիպել տեղի հայութեանը՝ <http://armenpress.am/arm/news/777778/aram-arajinn-aycecel-e-salonik-ev-handipeltexi-hayutyany.html> (24.10.2016):

⁵⁵ “Ο Οικουμενικός Πατριάρχης μαζί με τον Αρμένιο πατριάρχη Αράμ στην Κομοτηνή” (Տիեզերական պատրիարքը հայ պատրիարք Արամին հետ Քոմոթինիի մէջ)՝ http://fanarion.blogspot.am/2014/09/blog-post_83.html (24.10.2016):

տարագ կը մատուցուի, որմէ ետք կը կատարուի քննարկում դաւանանքային եւ ծիսական խնդիրներու շուրջ:

Յոյն կղերի շրջանակներու մէջ գոյութիւն ունին նաեւ աւելի ծայրայեղ կամ նեղ կրօնաբանական մօտեցումներ: Ոմանք հայերը կ'ընկալեն իբրեւ աղանդաւորականներ (հերետիկոս, միաբնակ կամ գրիգորեանական)⁵⁶: Սակայն, այս համոզումները չեն ներկայացներ Յոյն Եկեղեցւոյ պաշտօնական կեցուածքը⁵⁷:

Մինչեւ 2000՝ երոպական երկիրներու քաղաքացիներու անձնագիրի տուեալներուն մէջ կը նշուէր կրօնական պատկանելիութիւնը: Այդ շրջանին, Յունաստանի իւրաքանչիւր առնչեալ պետական պաշտօնեայ իր տրամաբանութեամբ կը վերծանէր Հայ Եկեղեցի հասկացութիւնը: Այդպիսով, ի յայտ եկան զաւեշտական եւ անհեթեթ գրութիւններ հայերու անձնագիրներուն մէջ, ինչպէս օրինակ՝ «հայ օրթոտք», «հայ եկեղեցի քրիստոնեայ», «յունահայ եկեղեցի քրիստոնեայ»... եւն., բայց երբեք՝ «Հայ Առաքելական Եկեղեցի»: Անձնագիրներուն մէջ կրօնական պատկանելիութեան սխալ արձանագրումը երկար ժամանակ դժգոհութիւն կամ նեղութիւն պատճառած է յունահայերուն: Յունահայերուն մեծամասնութիւնը այսօր ինքզինք «օրթոտք» կը դաւանի, նկատի ունենալով բառացի թարգմանութիւնը եզրին, որ կը նշանակէ ուղիղ եւ ոչ թէ ծուռ կամ հաւատքի մէջ շեղած⁵⁸:

Պէտք է ըսել, թէ 1922ի փոքրասիական արդէտէն ետք, Յունաստան գաղթած հայերու մէջ կային նաեւ քաղկեդոնական հայեր, որոնք Յունաստան գալով ժամանակի ընթացքին ձուլուեցան յոյն հասարակութեան մէջ⁵⁹: Այդ հայերը կը կոչուէին նաեւ հայ հոռոմներ⁶⁰:

Պէտք է նշել, որ Յունաստանի հայկական եկեղեցիներու տոմարային եւ ծիսակարգային արարողակարգը կը հետեւի Հայ Առաքելական Եկեղեցւոյ

⁵⁶ Είναι οι Αρμένιοι Ορθόδοξοι; Οι θέσεις του Μ. Φωτίου. Πρωτ. Θεόδωρος Ζήσης՝ http://anavaseis.blogspot.am/2011/01/blog-post_952.html (25.10.2016):

⁵⁷ Սալոնիկի Ս. Աստուածածին եկեղեցւոյ բակի մուտքին կը տեսնենք մարմարեայ յունարէնով ցուցանակ մը, որուն վրայ գրուած է «Օրթոտքս հայկական եկեղեցի՝ Ս. Աստուածածին» (Օρθόδοξος Αρμενική Εκκλησία της Παναγίας): 1970ականներուն այդ պիտակը զետեղուեցաւ (սխալ կամ անիմաստ տրամաբանութեամբ) ատենի թաղային մարմնին կողմէ: Օրթոտքս բառը օգտագործուած է պայմանական մօտեցումով, նկատի ունենալով որ օրթոտքս կը նշանակէ ուղիղ հաւատք, ուղղափառ եւ ոչ թէ ուղղափառ եկեղեցիի պատկանող:

⁵⁸ Ներկայիս ընդունուած համաւերոպական օրէնքով կրօնքը չ'արձանագրուիր անձնագիրներուն վրայ՝ անհատական իրաւունքներու եւ խտրականութեան դէմ դրսեւորումի պատճառաբանութեամբ:

⁵⁹ Οι Χάι-χորώμιδες Οδοιπορικό στην ιστορία των Αρμενίων - Ρωμαίων του Ακν՝ <http://www.armenika.gr/istoria/83-istoriki-ereuna/446-oi-xay-xoromides-odoiporiko-sthn-istoria-twn-armeniwn-rwmaiwn-tou-akn> (27.10.2016):

⁶⁰ Ανεστίδης Σταύρος, “Χάι-Χορούμ, (Αρμενόγλωσσοι Έλληνες)” [Հայ-հոռոմ, (հայալեզու յոյներ)], *Δελτίο Κέντρου Μικρασιατικών Σπουδών*, 1984:5, Αθήνα էջ 37-46:

բոլոր օրէնքներուն եւ ասանդութիւններուն: Միակ տարբերութիւնը այն է, որ Աւագ Շաբաթը եւ Ս. Զատիկը վաղուց կը տօնուի ըստ յունաց տոմարին⁶¹:

Այդ արարողութեան ժամանակ, Սալոնիկի հայկական եկեղեցւոյ հաստացեալներու թափօրը շրջագայելով եկեղեցւոյ մօտակայ փողոցները կը հանդիպի յունական Ս. Կոստանդինոսի եկեղեցւոյ ծխականներուն հետ: Երկու եկեղեցիներու կղերներն ու դպրաց դասերը փոխադարձաբար համբուրելով միմեանց Աւետարանները, բացօթեայ աղօթք կը կատարեն երկու լեզուներով:

Հայկական եկեղեցին հայօճախներու ամենակարեւոր ազգակներէն մէկն է, որ կը նպաստէ ոչ միայն կրօնական պարտականութիւններուն, այլև ընդհանուր ազգային կեանքին եւ հայութեան համախմբման: Յոյն եւ հայ եկեղեցիներու միջեւ պարզապէս լաւ յարաբերութիւնները կրնան աւելի սերտանալ՝ սատարելով երկու ժողովուրդներու եւ պետութիւններու արդի մարտահրաւէրներու յաջող դիմագրաւումին:

Հայօճախը կապեր ունի նաեւ քաղաքիս այլ ազգային միաւորներու հետ: Այսօր Սալոնիկի մէջ գոյութիւն ունի փոքրաթիւ հրէական համայնք մը: Մինչեւ Բ. համաշխարհային պատերազմ մօտ 60,000 հոգիէ բաղկացած հրէական մեծ համայնք մը կար: Այսօր, հայկական ու իսրայէլեան համայնքներուն միջեւ կը տիրեն դիւանագիտական յարաբերութիւններ: Կան փոխադարձ կապեր, որոնք առնչուած են զանազան ձեռնարկներու եւ պարզ քաղաքավարութիւն են, չունին էական գործակցութեան շունչ:

Սալոնիկի մէջ կան նաեւ բազմաթիւ յունական հայրենակցական կազմակերպութիւններ, որոնք հիմնուած են 1922էն ետք Փոքր Ասիայէն, Արեւելեան Թրակիայէն եւ մանաւանդ Պոնտոսէն տեղահանուած զանազուածներու կողմէ: Հայօճախը եւ Հայ Դատի Յանձնախումբը ունին լայն գործակցութիւն անոնց հետ: Յատկապէս պոնտական գլխաւոր կազմակերպութիւններուն հետ հաստատուած է շատ բարեկամական, բայց միայն ասանդական եւ զգացական բնոյթ կրող գործակցութիւն⁶²: Յունաստանի Հայ Դատի

⁶¹ Այս որոշումը առնուած է թեմական ժողովէն եւ կաթողիկոսութեան համաձայնութեամբ, նպատակ ունենալով պարզ գործնականութիւն ապահովել (ոչ-աշխատանքային օրեր, դպրոցներու եւ աշակերտներու հանգստեան օրեր եւ ընդհանուր տօնական միջավայր): Տեղական սովորութիւններու հիման վրայ տեղական հայկական եկեղեցին ընդունած է Աւագ Ուրբաթը եւ համայն համայնքի մասնակցութեամբ Քրիստոսի դագաղի շրջագայութիւնը տուեալ եկեղեցւոյ կից փողոցներուն մէջ: Օրթոտոքս եկեղեցւոյ պատկանող այս սովորութիւնը իբրեւ ասանդոյթ որդեգրած են Յունաստանի բոլոր հայկական եկեղեցիները:

⁶² Այսուամէնայնիւ, դրական կրնան նկատուիլ Երոպայի մէջ Պոնտոսի յոյներու ցեղասպանութեան միջազգայնացման քայլերը: Այս գործընթացը սկսաւ Սալոնիկի մէջ եւ Երոպայի Հայ Դատի Յանձնախումբի օժանդակութեամբ (Պրիքսէյ) զգեցաւ աւելի քաղաքականացած նախաձեռնութիւններ (Երոպայի Պոնտոսցիներու Համագումար, փոքրիկ լուսիստական շարժում... են.): Այս գործընթացը քիչ մը

Յանձնախումբի, Հայ Դատի կեդրոնական գրասենեակի (Երևան) եւ Աթենքի ՀՀ դեսպանութեան ջանքերով 2015ին ՀՀն ճանչցաւ Պոնտոսի յոյներու ցեղասպանութիւնը⁶³:

Կապեր՝ սփիւռքեան այլ հայօճախներու հետ

Սալոնիկի եւ ընդհանրապէս Յունաստանի հայօճախը չունի մասնաւոր կապեր Սփիւռքի այլ հայօճախներու հետ: Գոյութիւն ունի անշուշտ, հայօճախներուն մէջ գործող համահայկական ծանօթ կազմակերպութիւններու (ՀՕՄ, ՀՄԸՄ, Համազգային, Հայ Դատ, Հայաստան Հիմնադրամ) փոխգործակցութիւն՝ հիմնուած այդ կազմակերպութիւններուն ներքին կանոնադրութեան վրայ: Յատկապէս Մակեդոնիոյ եւ Թրակիոյ Հայ Գթութեան Խաչի (ՀՕՄի միաւոր) մանկական ամառանոցին կը մասնակցին երեխաներ այլ երկիրներէ (Լիբանան, Սուրիա, Ֆրանսա, Կիպրոս եւն.): Եւրոպայի Հայ Դատի Յանձնախումբին կազմակերպած Պրիւքսէլի համաերոպական ժողովին կը մասնակցին ներկայացուցիչներ Յունաստանի համայնքներէն:

Միակ հայօճախը, որուն հետ Սալոնիկի եւ Հիւսիսային Յունաստանի որոշ ենթօճախներ յաճախակի շփում ունին՝ Պուլկարիոյ Փլովտի (Ֆիլիպէ) քաղաքի հայօճախն է: 1990էն ետք, երկաթեայ վարագոյրի քանդումով, Պուլկարիան եւ ընդհանրապէս բոլոր պալքանեան երկիրները մատնուեցան շատ վատ տնտեսական եւ հասարակական կացութեան: 1991ի առաջին շաբաթը Սալոնիկի հայօճախը կազմակերպեց մարդասիրական օգնութեան առաքելութիւն՝ ուղղուած Փլովտիի հայութեան: Այդ առիթով հայօճախէն մօտ 50 հոգի այցելեց Փլովտի՝ օգնութիւն բաժնելու համար իրենց հայրենակիցներուն: Պատմական այդ հանդիպումը առաջինն էր, որ տեղի կ'ունենար յետխորհրդային եւ Վարշաւիոյ Ուխտի երկիրներէն մէկուն հայօճախին եւ դասական Սփիւռքի Արեւմտեան Եւրոպայի հայօճախի մը միջեւ: Այդուհետեւ, երկու հայօճախները պահպանեցին յաճախակի կապը՝ հիւրախաղերու թէ՛ այլ տօնակատարութիւններու միջոցով, փոխայցելութիւններով թէ՛ այլապէս⁶⁴:

1990ականներուն, Սալոնիկի հայօճախը ստեղծեց նաեւ ջերմ յարաբերութիւններ Սերպիոյ (Պելկրատ) փոքրաթիւ հայութեան հետ, որ համայնքային կազմակերպական իրավիճակ եւ աւանդ չունէր: Սերպահայ պատանիներ (նաեւ խառն ամուսնութեանց ծնունդներ) քանի մը տարի մասնակ-

պարագայական կը թուի եւ ոչ այնքան կազմակերպուած, քանի որ Յունաստանի պաշտօնական արտաքին քաղաքականութիւնը զուպ կը մնայ հարցերու նկատմամբ, որոնք կրնան թուրք-յունական յարաբերութեանց լարուածութիւն ստեղծել:

⁶³ Armenia Recognizes Assyrian and Greek Genocides՝ <http://armenianweekly.com/2015/03/24/armenia-assyrian-greek-genocides/> (28.10.2016):

⁶⁴ Զոր օրինակ, 2015ին Փլովտիի համայնքի երգչախումբը Սալոնիկի մէջ մասնակցեցաւ Դաշնակցութեան Օրուան հանդիսութեան՝ ստեղծելով խանդավառ մթնոլորտ մը:

ցեցան Հայ Գթութեան Խաչի ամառանոցին: Կատարուեցան նաեւ հանդիպումներ Պելկրատի հայութեան ներկայացուցիչին հետ, սակայն ակնկալուած արդիւնքները չտուին:

Սալոնիկի հայօճախը ունէր բոլոր հնարատրութիւնները համադրելու եւ կազմակերպական առումով հանդէս գալու իբրեւ Պալքանեան Թերակղզիի հայութեան կեդրոնական հայօճախ: Սակայն, տեղական քաղաքական պայմանները (Եուկուլաւիոյ քաղաքացիական պատերազմները), հայերու անկազմակերպ վիճակը եւ պալքանահայութեան նօսր թիւը (ի բացառեալ՝ Պուլկարիոյ) չնպաստեցին այդ նպատակի իրագործման⁶⁵:

Յարաբերութիւններ՝ Հայաստանի եւ Արցախի հանրապետութեանց հետ

Հայօճախը Հայաստանի Հանրապետութեան անկախացման առաջին օրերէն պատրաստակամ գտնուեցաւ ՀՀ նորաստեղծ հրամայականներուն: Սալոնիկահայութիւնը, հակառակ իր փոքրաթիւութեան, կազմակերպեց բազմաթիւ մարդասիրական առաքելութիւններ դէպի Հայաստան: 1988ի երկրաշարժի մարտահրաւէրը, 1990ի քաղաքական զարգացումները եւ արցախեան ինքնորոշման իրաւունքի գոյամարտը հայրենիքի նկատմամբ պարտականութեան զգացումները աշխուժացուցին հայօճախը: Այդ ժամանակաշրջանին եւ յատկապէս 1991-96ին Յունաստանի հայութիւնը եւ մասնաւորապէս Սալոնիկի գաղութը, Յունաստանի պետութեան գործակցութեամբ, կազմակերպեցին մարդասիրական թոյնքներ դէպի ՀՀ: Յունաստանի կառավարութիւնները անտարբեր չգտնուեցան յունահայերու դիմումներուն, ընդհակառակը տրամադրեցին Olympic Airwaysի օդանաւեր, որոնց միջոցաւ օգնութիւն փութացուեցաւ ՀՀ⁶⁶: Հայօճախը Հայ Գթութեան Խաչի ՀՕՄի միաւորի եւ տեղացի հայ գործիչներու անձնական ջանքերով յաջողեցաւ նաեւ մարդասիրական օգնութիւն ապահովել յունական սննդամթերքային մեծ ընկերութիւններէն⁶⁷:

⁶⁵ Նման ծրագիր մը կարիքն ունի Պալքաններու եւ յատկապէս Ալպանիոյ, Սերպիոյ, Մոնթենեկոյի եւ այլ երկիրներու հայութեան մասին անհրաժեշտ աւելի լայնատարած հետազոտութիւններու (The Forgotten Diaspora: Bulgarian-Armenians after the end of Communism՝ <http://oxbridgepartners.com/hratch/index.php/component/content/article/2-uncategorised/123-the-forgotten-diaspora-bulgarian-armenians-after-the-end-of-communism> (30.10.2016):

⁶⁶ Յոյն կառավարութիւնը տրամադրեց նաեւ զինուած ուժերու բեռնատարական C-130 օդանաւեր, որոնք սննդամթերք, դեղորայք, վիրաբուժական իրեր եւ այլ մարդասիրական օգնութիւն փոխադրեցին Երեւան:

⁶⁷ Այս մարդասիրական նուիրումին կազմակերպական շարժիչ ուժը եղաւ սալոնիկահայ ազգային գործիչ հրապարակախօս եւ ՀՀ 1991-92ի պատուակալ առաջին լիազօր յունահայ Կարապետ Գալֆայեանը (1933-2013) (Caucasus Chronicles: Nation-building and Diplomacy in Armenia, 1993-1994՝

Իդէպ, Սալոնիկի օդակայանի բեռնատարական պահեստներուն մէջ կը հաւաքուէր ԱՄՆի պետութեան կողմէ ՀՀ դրկուած օգնութիւնը⁶⁸:

Նոյն ժամանակաշրջանին, Համազգային Կրթական եւ Մշակութային Միութեան նախաձեռնութեամբ եւ քաղաքի պետական իշխանութիւններու գործակցութեան եւ տնտեսական աջակցութեան շնորհիւ ՀՀէն Սալոնիկ հրաւիրուեցան բազմաթիւ գեղարուեստական խումբեր եւ անհատ արուեստագէտներ: Կազմակերպուեցան բարձրորակ ձեռնարկներ Սալոնիկի քաղաքապետարանի հովանաւորութեամբ: Հիւրերը ներկայացուցին հայկական մշակոյթի նմուշներ, որոնք առիթ հանդիսացան ամրապնդելու նաեւ երկու ժողովուրդներու աւանդական, բարեկամական կապերը:

Քաղաքի «Տիմիթրիա» փառատօներու սրահին ձեռնարկներուն մասնակից դարձան գեղարուեստական համոյթներ, ինչպէս Յովհաննէս Չեքիճեանի, Լորիս Ճգնաւորեանի, Արամ Ղարապէկեանի ղեկավարութեամբ պետական երգչախումբը, ֆիլիարմոնիք նուագախումբերը, ինչպէս նաեւ Կոմիտաս Քառեակը, Քատանս Համոյթը... եւն.:

1997ին «Սալոնիկ 1997 Եւրոպայի Մշակութային Մայրաքաղաք» փառատօնի մշակութային ձեռնարկներու ծիրէն ներս կազմակերպուեցան տարբեր ոլորտի ձեռնարկներ, որոնցմէ ամենէն ազդեցիկը «Հայաստանի Փոքրիկ Երաժիշտներ»ու երգչախումբի ելոյթն էր (little singers of Armenia): Վերջինս եւ այլ խմբակներ յոյն գեղարուեստասէր զանգուածին մօտ թողած տպաւորութեան պատճառով միքանի անգամ հրաւիրուեցան Սալոնիկ⁶⁹:

Սալոնիկի հայօճախին այցելութիւն տուած են ՀՀ առաջին երկու նախագահները: 1996ին հայօճախ այցելեց ՀՀ առաջին նախագահ՝ Լեւոն Տէր Պետրոսեանը: Այդ այցելութիւնը ընթացաւ անշուք ձեւով՝ հայօճախին անդամներու միտումնաւոր բացակայութեամբ, ՀՅԴի եւ ՀՀ իշխող կազմա-

<https://books.google.am/books?id=cELfINDAH0oC&pg=PA52&lpg=PA52&dq=garabed%20kalfayan%20thessaloniki&source=bl&v=onepage&q=garabed%20kalfayan%20thessaloniki&f=false> (32.10.2016)

⁶⁸ 1994ի աշնան Սալոնիկի եկեղեցւոյ կից կեդրոնական մայր պողոտայի վրայ գետեղուած է խաչքար մը՝ ի յիշատակ Յունաստանի եւ ԱՄՆի մարդասիրական օժանդակութեան: Խաչքարին վրայ փորագրուած է հետեւեալ յունարէն արձանագրութիւնը. «Յիշատակի սիրոյն Հայաստանը պատուելով Յունաստանին եւ ԱՄՆին 1993ի օգնութեան համար Սալոնիկի միջոցաւ գետեղեց այս յուշարձանը»: ΜΝΗΜΗΣ ΧΑΡΗΝ, Η ΑΡΜΕΝΙΑ ΤΙΜΩΝΤΑΣ ΤΗΝ ΕΛΛΑΔΑ ΚΑΙ ΤΙΣ ΗΝΩΜΕΝΕΣ ΠΟΛΙΤΕΙΕΣ ΑΜΕΡΙΚΗΣ ΓΙΑ ΤΗ ΒΟΗΘΕΙΑ ΤΗΣ ΜΕΣΩ ΘΕΣΣΑΛΟΝΙΚΗΣ ΤΟ 1993 ΕΣΤΗΣΕ ΑΥΤΟ ΤΟ ΜΝΗΜΕΙΟ:

⁶⁹ Concerts dedicated to the 100th anniversary of the Armenian Genocide in Thessaloniki՝ http://www.mfa.am/en/press-releases/item/2015/04/06/concert_greece/ (31.10.2016): Այս բոլոր ծրագիրներու իրականացման մէջ կարեւոր դեր ունեցաւ Սալոնիկի քաղաքապետարանի երաժշտական խումբի հիմնադիր եւ ղեկավար խմբավար Քոզմաս Ղալիլէասը (1936-2000), Սալոնիկի Համազգայինի վարչութեան վաստակաւոր անդամ Տիրուի Գալֆայեանի ամուսինը (Χασιώτης, էջ 158):

կերպութեան՝ Հայոց Համազգային Շարժումի (ՀՀՇ) միջեւ առկայ քաղաքական լարուածութեան պատճառով, որով ՀՅԴ Յունաստանի կեդրոնական կոմիտէն անտարբեր եւ վանողական կեցուածք որդեգրեց նախագահին հանդէպ:

1997ին Թեսալոնիկէ ժամանեցին Արցախի նախագահ Արկաղի Ղուկասեանը եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրէն Նայիրա Մելքումեանը, որոնք հրաւիրուած էին Հայ Դատի Յանձնախումբին կողմէ:

2001ին ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեան այցելեց Սալոնիկ եւ հանդիպում ունեցաւ հայօճախի միութիւններու ներկայացուցիչներուն հետ:

2007ին հայօճախ ժամանեց եւ բանախօսեց ՀՅԴ Բիւրոյի անդամ Վահան Յովհաննիսեանը (1956–2014) նաեւ՝ Արցախի արտաքին գործոց նախարար Գէորգի Պետրոսեանը:

2010ին իբրեւ նորաստեղծ Սփիւռքի նախարարութեան ներկայացուցիչ Հրանուշ Յակոբեան Սալոնիկ ժամանեց եւ հանդիպում ունեցաւ հայօճախի ներկայացուցիչներու հետ՝ բարձր գնահատելով գաղութի կազմակերպական եւ ազգային գործունէութիւնը:

2010ին նաեւ ՀՀ Առաջին Ալիք Հ1ի «Օտար ամայի ճամփէքի վրայ» հաղորդաշարը այցելեց Յունաստան եւ Սալոնիկ ու նկարահանումներ կատարեց նպատակ ունենալով հայօճախը լաւագոյնս ծանօթացնել հանրութեան:

2015ին Եղեռնի 100ամեակի ոգեկոչման առթիւ հայօճախը օժանդակեց Մանուէլ Սարիբէկեանի (Man-production) կողմէ *Փրկութեան քարտէզ* (*The Map of Salvation*) ֆիլմի աշխատանքներուն, երբ նկարահանումներ եղան Սալոնիկի մէջ⁷⁰: Ֆիլմը 15 Նոյեմբեր 2016ին ցուցադրուեցաւ Սալոնիկի կինօփառատօսի շրջագիծէն ներս: Այս գործընթացին համար մեծ ներդրում ունեցաւ հայօճախի Համազգային Մշակութային Միութիւնը:

ՀՅԴ Բիւրոյի անդամ Կիրո Մանոյեանը 2016ի աշնան, ՀՀ անկախացման 25ամեակին առիթով այցելեց Յունաստան եւ Սալոնիկ ու բանախօսեց հայօճախին անդամներու ներկայութեամբ:

Ինչ կը վերաբերի հայօճախին եւ Աթենքի ՀՀ դեսպանութեան գործակցութեան, ՀՀ դեսպանատան նախկին հիպատոս Մարիամ Յարութիւնեան (ՀՀ Աթենքի դեսպանութեան երրորդ քարտուղար հիպատոս 2013-16), հետեւեալը կը վկայէ.

Դեսպանութեան յարաբերութիւնները Սալոնիկի հայկական համայնքի հետ բաւականին լաւ են: Համայնքն աջակցում է դեսպանութեան նախաձեռնութիւններին՝ տարբեր մշակութային միջոցառումներին Սալոնիկ քաղաքում ցուցահանդէսներ, համերգեր: Ամիսը մէկ անգամ այստեղ տեղի է ունենում հիպատոսական ընդունելութիւն Սալոնիկ քաղաքում Հիւսիսային Յունաստանում

⁷⁰ *Map of Salvation Film in Commemoration of the 100th Anniversary of the Armenian Genocide* <http://mapofsalvation.com/en/> (2.11.2016):

բնակող հայերի համար: Հիպատոսական ընդունելության համար տարածքը տրամադրում է հայկական համայնքը⁷¹:

Նշենք նաեւ, որ Սալոնիկի հայօճախը եւ թաղային մարմինը մասնակցեցան ՀՀ դեսպանատան Աթենքի շէնքի սեփականացման 2004ի դրամահաւաքին:

ՆԻԻԹԱԿԱՆ ԱՂԲԻԻՐՆԵՐ

Հայօճախին նիւթական աղբիւրները կրնանք բաժնել երկուքի.- ա) եկեղեցական, բ) պետական: Ստորեւ՝ Սալոնիկի եկեղեցւոյ նիւթական աղբիւրները, որոնց մատակարարման միակ լիազօր մարմինը թաղականութիւնն է եւ ազգային իշխանութեան տնտեսական յանձնախումբը⁷²:

Ա.- Ազգային տուրք

Ազգային սահմանադրութեամբ սահմանուած ազգային տուրքն ու գերեզմանատան տուրքը մասամբ կը բանին: Թաղային մարմինը չի կրնար ստիպել հայօճախի անդամները որ իրենց տնտեսական պարտականութիւնները կատարեն համայնքին եւ եկեղեցիին հանդէպ: Հակառակ ասոր, հայօճախի անդամները պարտաճանաչ են իրենց պարտականութիւններուն մէջ: Եկամուտային այս աղբիւրը սակայն, բաւական տկար կը համարուի:

Բ.- Նուիրատուութիւններ

Դասական Սփիւռքի մէջ զարգացած է նուիրատուութիւններու ամառային թը՝ եկեղեցւոյ կամ որեւէ միութեան ուղղուած: Հայօճախի անդամներ շատ յաճախ նուիրատուութիւններ կը կատարեն իրենց հանգուցեալ հարազատներու յիշատակին՝ յուղարկաւորութիւններու կամ հոգեհանգիստներու առթիւ: Այս եկամուտը ունի նաեւ բարոյական նշանակութիւն, քանի որ կ'ամրապնդէ անհատին պարտականութեան գիտակցութիւնն ու զգացումը՝ հանդէպ իր հայօճախին եւ ազգային կեանքին: Սակայն, այս եկամուտը հետեւողական եւ մնայուն բնոյթ չունի, իսկ գումարի արժէքը կը տարբերի ըստ պարագայի:

Գ.- Եկեղեցական սպասարկութիւններու եկամուտ

Եկեղեցական սպասարկութիւններու (ծիսական արարողութիւններ, հարսանիք, մկրտութիւն, յուղարկաւորութիւն, հոգեհանգիստ, տնօրինէք...) համար սահմանուած է առաջնորդարանի կողմէ համապատասխան սակ: Փոքրանդամ հայօճախներու համար, սակայն, այս եկամուտն ալ չունի մեծ կշիռ: Տնօրինէքի պարագային ճշտուած գումար չկայ եւ կը տրուի որպէս «ժամուց»՝ հայօճախի հոգեւոր հովիւին: Իսկ յուղարկաւորութիւններու կամ հոգեհանգիստներու պարագային, եթէ հանգուցեալը ազգանուէր գործունէութիւն ունեցած է, թաղականութիւնը յատուկ որոշումով անվճար արարո-

⁷¹ Անձնական հարցազրոյց, Յուլիս 2016ին:

⁷² Միութենական տնտեսական խնդիրներու մասին պիտի անդրդառնանք յաջորդող էջերուն մէջ:

ղութեան դրութիւն կ'ապահովէ: Նման պարագաներու, ընտանեկան եւ ընկերային շրջապատը նուիրատուութիւններու միջոցաւ կը կատարէ այդ պարտականութիւնը: Մոմերու վաճառքը ունի մնայուն բնոյթ, բայց փոքրաթիւ ծխականներու պատճառաւ, հաւաքուած գումարը սահմանափակ է:

Դ.- Եկեղեցապարկան ազգային կալուածներ եւ անշարժ գոյք

Ժամանակի ընթացքին որոշ անշարժ գոյքեր (յարկաբաժին, խանութ, հողամաս) ժառանգուեցան հայկական եկեղեցւոյ անզուակ կամ անժառանգ հայրենակիցներու կողմէ՝ նպաստելով եկեղեցական գանձին: Այս եկամտային աղբիւրը միակն է, որ մնայուն շարունակականութիւն ունի եւ անելի արդիւնաւէտ գործօն է:

Այս կալուածներուն վերահսկումը եւ մատակարարումը կը կատարուի թաղային մարմնի լիազօր իրաւաբանին եւ հաշուակալին կողմէ, որոնք հաշուետու են թաղային մարմնին, գանձապահին եւ անդամներուն: Յունաստանի տնտեսական ճգնաժամին պատճառաւ, սակայն, վերջին տարիներուն որոշ թիւով յարկաբաժիններ եւ խանութներ մնացին առանց վարձակալի: Միւս կողմէ, ըստ Սալոնիկի թաղային մարմնի լիազօր հաշուապահ Քարոլոս Երամեանի, վերջին տարիներուն պետութեան հարկային մարմիններու սահմանած ծանր տուրքերու պատճառաւ կալուածներուն եկամուտները մեծապէս նուազած են⁷³:

Ե.- Պետութեան կողմէ օժանդակութիւններ

Մինչեւ Յունաստանի 2010ի տնտեսական ճգնաժամը, եկամտի այս աղբիւրը շօշափելիօրէն նշանակալից էր: 1997ին, «Սալոնիկ՝ Երոպայի Մշակոյթի Մայրաքաղաք» փառատօնին ծիրէն ներս, օրինակ, պետական հովանաւորութեամբ նորոգուեցաւ հայկական եկեղեցին եւ վերադասաւորուեցաւ ու արդիականացաւ հայօճախին պատմական արխիւը: Նման օժանդակութիւններ շարունակուեցան տարիներու ընթացքին գանազան միութենական, մշակութային նախաձեռնութիւններու համար⁷⁴: Թաղականութիւնը տնտեսապէս ազատ մնաց ձեռնարկներ քաջալերելու կամ վարկեր հաւասարակշռելու խնդրէն:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Հասարակական կազմակերպութիւններ (միութիւններ)

Հայօճախը որպէս դասական Սփիւռքի մասնիկ, բաղկացած է գրեթէ այն բոլոր միութիւններէն, որոնք կը գործեն Սփիւռքի մէջ:

⁷³ Անձնական հարցազրոյց Կարլոս Երամեանի հետ, Յուլիս 2016:

⁷⁴ 26/5/2009 - “Ο υπουργός κ. Σταύρος Καλαφάτης συναντήθηκε με εκπροσώπους της αρμενικής παροικίας Θεσσαλονίκης” (Նախարար Պ. Սթաւրոս Քալաֆախիւր հանդիպեցաւ Թեսալոնիկէի հայկական գաղութի ներկայացուցիչներուն հետ)՝ http://www.mathra.gr/default_3123.aspx (4.11. 2016):

Ա.- Հայ Գթութեան Խաչի (ՀՕՄի միաւոր) Մակերոնիոյ եւ Թրակիոյ շրջանային վարչութիւն եւ մասնաճիւղեր (Αρμενικός Σταυρός Ελλάους Μακεδονίας Θράκης): Ան կը գործէ պետական վաւերացումով եւ հաշ-
ուետու է պետական հարկային դաշտին՝ նախատեսուած համապատաս-
խան օրէնքներով⁷⁵:

Յունաստանի մէջ գոյութիւն ունի ՀՕՄական երկու միաւոր: Աթենքի ՀՕՄի միաւորը կը կոչուի Հայ Կապոյտ Խաչ (Αρμενικός Κυανός Σταυρός): Իսկ Սալոնիկի եւ Հիսիսային Յունաստանի գաղութներու մէջ գործող ՀՕՄի միաւորը կը կոչուի Հայ Գթութեան Խաչ: Այս երկու միաւորները անջա-
տաբար ուղղակիօրէն կապուած են ՀՕՄի Կեդրոնական Վարչութեան, Պոստոն:

Մակերոնիոյ եւ Թրակիոյ ՀԳԽն Հիսիսային Յունաստանի մէջ գործու-
նէութեան սկսած է 1920ականներէն, նպաստելով գաղթական, տարագ-
րեալ զանգուածներու ամոքման: ՀԳԽն կը մասնակցի ՀՕՄի բոլոր համա-
հայկական ծրագիրներուն: 1990ականներուն, ան մարդասիրական մեծ օգ-
նութիւն ուղարկեց ՀՀ եւ Արցախ: ՀԳԽն բարեսիրական կազմակերպու-
թիւն ըլլալէ անդին ունի նաեւ մեծ դեր հայապահպանման եւ ազգանուէր
գործունէութեան մէջ:

ՀԳԽի շրջանային վարչութիւնը, որուն նստավայրը Սալոնիկն է, ունի
մասնաճիւղեր Քաւալա, Քսանթի, Քոմոթինի, Ալեքսանդրուպոլիս եւ Տիտի-
մոթիսո-Օրեսթիատա քաղաքներուն մէջ:

Մասնաճիւղերու վարչութիւններու ներկայացուցիչները երկամեայ դրու-
թեամբ կը գումարեն շրջանային ժողով, ընտրելու շրջանային վարչութիւն:

ՀԳԽի լայնածաւալ գործունէութեան ամենակարեւոր երեսակներէն են
հայապահպանման եւ կրթական առաքելութիւնները.-

ՀԳԽի, ինչպէս նաեւ հայօճախի բոլոր միութիւններուն համար, 1990էն
ետք ի յայտ եկաւ նոր մարտահրաւեր մը՝ ՀՀէն արտագաղթած նոր սե-
րունդի ներգրաման եւ հայեցի դաստիարակութեան խնդիրը: 1947էն ետք
սակաւաթի հայօճախը ունէր 20-25 աշակերտներէ բաղկացած շաբաթօր-
եայ Մալաքեան-Գասպարեան ծաղկոցը, ուր հայօճախին երեխաները կը
ստանային տարրական հայեցի կրթութիւն: 1990էն ետք, երբ ի յայտ եկաւ

⁷⁵ Έγκριση προϋπολογισμού έτους 2015 του Κληροδοτήματος "Σιρανούς Κασπαριάν"
το οποίο το διαχειρίζεται το Σωματείο με την επωνυμία "Αρμενικός Σταυρός του
ελλέους Μακεδονίας Θράκης"
http://gdcl.damt.gov.gr/images/dkpr/%CE%9A%CE%A9%CE%9D%CE%A3%CE%A4%CE%91%CE%9D%CE%A4%CE%99%CE%9D%CE%91%CE%9A%CE%91%CE%A3%CE%A0%CE%91%CE%A1%CE%99%CE%91%CE%9D-%CF%80%CF%81%CE%BF%CF%85%CF%80%CE%BF%CE%BB%CE%BF%CE%B3%CE%B9%CF%83%CE%BC%CE%BF%CF%82_2015-%CE%B5%CE%B3%CE%BA%CF%81%CE%B9%CF%83%CE%B7-%CE%9D_4182-132013.pdf (5.11.2016):

ՀՀ էն եւ Վրաստանէն Սալոնիկ ապաստանած հայրենակիցներու ճուլման վտանգը՝ թափ տրուեցաւ շաբաթօրեայ դպրոցին, որուն աշակերտութեան թիւը 1993-94ին բարձրացաւ մօտ 60-70ի: Յաջորդող տարիներուն, այդ թիւը հասաւ մօտ 160ի: Ասոնցմէ ընդամէնը 4-5 հոգին բնիկ յունահայերու զաւակներ էին:

Ծովափնեայ սեփական հողամասի վրայ 1990էն իվեր սկսաւ գործել «ՀԳԽԻ Խալքիտիքի ամառանոցը», ուր կամաւորներ սիրալոժար կը ծառայեն: Վերջինս եղաւ նաեւ հայապահպանման միջոց՝ ներգրաւելով նորահաստատ հայերու զաւակները⁷⁶, ինչպէս նաեւ այլ հայօճախներէ եկած պատանիներ: Ան գործեց մինչեւ 2014, իսկ 2015ին դադրեցուց իր գործունէութիւնը Յունաստանի տնտեսական ծանր իրավիճակին պատճառով: Կ'ականկալենք որ յառաջիկային ՀԳԽԻ ամառանոցը վերաշխատի, թէկուզ ներկայ ծանր տնտեսական իրավիճակի պայմաններու մէջ:

Ամառանոցը (որ կը գործէր Յուլիսին) եւ հայկական դպրոցը (որ կը գործէ Սեպտեմբերէն Մայիս), շատ ծախսալից են: Հակառակ ասոր, սակայն, ՀԳԽն եւ գաղութի թաղային մարմինը միշտ տրամադրուած են այդ ուղղութեամբ օգտագործելու ձեռքբերուած նիւթական միջոցները՝ շարունակելու համար երթը այս զոյգ հաստատութեանց:

1994էն ետք, եղան որոշ մտածումներ ամէնօրեայ հայկական դպրոց հիմնելու մասին, որոնք երբեք լուրջ զարգացում եւ հասունացում չունեցան, իտես Աթենքի հայկական ամէնօրեայ դպրոցներու տնտեսական խնդիրներուն, նաեւ՝ նիւթական խոշոր աղբիւրներու պակասի պատճառաւ, որեւէ վարչութիւն յանձնառու չեղաւ իրականացնել այդպիսի նախաձեռնութիւն⁷⁷:

Մալաքեան-Գասպարեան ծաղկոցը պէտք է ընկալել որպէս հայապահպանման բոյն եւ ո՛չ միայն կրթական հաստատութիւն: Ծաղկոցին գլխաւոր նպատակը հայրենասիրական ոգիի, հայոց լեզուի, պատմութեան եւ մշակոյթի տարրական գիտելիքի փոխանցումն է երեխաներուն: 1994էն ետք, ծաղկոցին ուսուցչական կազմը կը բաղկանար ՀՀ էն Սալոնիկ հաստատուած ուսուցչուհիներէ, որոնք գրեթէ սիրալոժար դասաւանդեցին երկար տարիներ: Այսօր, ծանօթ տնտեսական պատճառներով, ծաղկոցի ուսուցչական կազմին նոր սերունդը կը ծառայէ լիովին կամաւոր հիմունքներով:

⁷⁶ ՀԳԽն հոգաց անոնց զաւակներուն ամառանոց կեցութեան ծախքերը:

⁷⁷ Այսօր Աթենքի հայկական դպրոցները գոյատեւման լուրջ հարցականի առջեւ են եւ ոչ ոք վստահ կրնայ երաշխաւորել անոնց յարատեւութիւնը: Օրինակի համար կրթութեան նախարարութեան վերջին որոշումով Աթենքի հայկական դպրոցներու եւ իսրայէլական համայնքի դպրոցներուն համար պետութեան կողմէ ուղարկուած ուսուցիչներու թոշակը պէտք է հոգայ տուեալ դպրոցներու հոգաբարձութիւնը (05-08-16 Αποσπάσεις σε Αρμενικό Κυανού Σταυρό, Γενική Αρμενική Ένωση Αγαθοεργίας & Ισραηλιτική Κοινότητα՝ <https://www.minedu.gov.gr/eidiseis/22664-05-08-16-apospaseis-se-armeniko-kyanoy-stavro-geniki-armeniki-enosi-agatho> (5.11.2016):

ՀԳԽՆ բացի դպրոցէն եւ ամառանոցէն կը կազմակերպէ զանազան այլ ներհամայնքային ձեռնարկներ, ինչպէս աւանդական դարձած ամէնամեայ կամաւորական արհմատուցութիւնը՝ Ապրիլ 24ի եւ եկեղեցւոյ հիմնադրման օրը: Հաւաքուած արհմը, յանուն ՀԳԽի, կը տրամադրուի անհրաժեշտ պարագայի տակ գտնուող քաղաքի հայերուն, անխտիր:

ՀԳԽՆ այսօր կը շարունակէ իր գործունէութիւնը դիմագրաւելով բաւական ծանր տնտեսական դժուարութիւններ՝ Յունաստանի տնտեսական տագնապին ծիրին մէջ:

Բ.- Համազգային Կրթական եւ Մշակութային Ընկերակցութիւն (Αρμενικός Πολιτιστικός Σύλλογος "Χαμασκάϊν")

Համազգայինը Սալոնիկի մէջ կը ներկայանայ «Ղազար Սարեան» մասնաճիւղի անուան տակ, ուր ներգրաւուած են գոհացուցիչ թիւով ՀՀէն նոր հաստատուած հայեր: Աթենքի մէջ կը գործեն երկու մասնաճիւղեր եւ շրջանային վարչութիւնը, որ կը համադրէ Համազգայինի ընդհանուր գործունէութիւնը Յունաստանի մէջ, կապ հաստատելով Համազգայինի կեդրոնական վարչութեան հետ⁷⁸: Ան պետութեան կողմէ ճանչցուած օրինական միութիւն է: «Ղազար Սարեան» մասնաճիւղը չունենալով հանդերձ սեփականութիւն ուստի եւ՝ որեւէ մնայուն նիւթական աղբիւր⁷⁹, իր ծաւալած գործունէութիւնը չի սահմանափակեր հայօճախի սահմաններով: 1990ականներէն սկսեալ միութիւնս կազմակերպեց ձեռնարկներ, որոնց մասնակցեցան ՀՀէն հրաւիրուած խմբաւորումներ: Այդ բոլոր ներկայացումները հանրային բնոյթ ունէին եւ ուղղուած էին մասնաւորաբար յոյն հասարակութեան: Այդ ձեռնարկներու ծախսերը հոգացին Սալոնիկի նահանգապետարանը կամ քաղաքապետարանը: Սալոնիկի ազատագրման 100ամեակին առիթով, 2012ին, պետական հովանաւորութեամբ եւ գործակցութեամբ Համազգայինը կազմակերպեց շարք մը հայկական ձեռնարկներ⁸⁰:

2010-11ին, Համազգայինը տեղաբնակ հայաստանցիներու առաջարկին անսալով ՀՀէն հրաւիրեց ժամանակակից երգիչներ (Թաթա Սիմոնեան,

⁷⁸ Αρμενικός Πολιτιστικός Σύλλογος "Χαμασκάϊν" <http://www.democu.gr/el/business-listing/%CE%B1%CF%81%CE%BC%CE%AD%CE%BD%CE%B9%CE%BA%CE%BF%CF%82-%CF%80%CE%BF%CE%BB%CE%B9%CF%84%CE%B9%CF%83%CF%84%CE%B9%CE%BA%CF%8C%CF%82-%CF%83%CF%8D%CE%BB%CE%BB%CE%BF%CE%B3%CE%BF%CF%82-%CF%87%CE%B1%CE%BC%CE%B1%CF%83%CE%BA%CE%AC%CF%8A%CE%BD> (6.11.2016):

⁷⁹ Մասնաճիւղի յատկապէս ներքին ձեռնարկներու իրականացման համար թաղային մարմինը միշտ սատար կը հանդիսանայ:

⁸⁰ Εκδηλώσεις Αρμένικης κοινότητας Θεσσαλονίκης http://www.cityportal.gr/articles_det1.asp?subcat_id=40&article_id=32663 (7.11.2016)

Եւա Ռիազ, Արմենշիկ): Այդ երկու ձեռնարկներուն ներկայ գտնուեցան ՀՀէն Սալոնիկ հաստատուած 2000-2500 հայեր⁸¹:

Գ.- Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն (Ένωση Αρμενίων Αθλητών Θεσσαλονίκης)

Սալոնիկի ՀՄԸՄի միաւորը ունի հարուստ պատմութիւն, սակայն վերջին տարիներուն գրեթէ կազմալուծ վիճակի մէջ կը գտնուի եւ իր գործունէութիւնը համապատասխան չէ իր անցեալին ու բաւական հեռու է նոր օրերու ակնկալիքներէն: Մասնաճիւղը որպէս առանձին հասարակական կազմակերպութիւն ճանչցուած է յունական պետութեան կողմէ (Սալոնիկի Հայ Մարզիկներու Միութիւն (Ένωση Αρμενίων Αθλητών Θεσσαλονίκης) կամ Արմենիքի "Αρμενική" անունով եւ ինքնամփոփ անջատողական գործընթացի մօտեցում մը որդեգրեց 1980ականներու վերջերը⁸²: Ան չի մասնակցիր Յունաստանի ՀՄԸՄի ընդհանուր համակարգին եւ չ'ընդունիր Աթենքի շրջանային վարչութեան կամ առաւել եւս համասփիւղեցեան ՀՄԸՄի կեդրոնական վարչութեան որոշումները:

Այսօր, Սալոնիկի հայօճախին մէջ ՀՄԸՄը անգործութեան մատնուած է, ան չունի պէտք եղած աշխուժութիւնը եւ ներկայութիւնը: Գոյութիւն ունի պասքէթի խումբ մը, որուն կը մասնակցին մեծ թիւով յոյներ⁸³: Իսկ խումբը իր հայ անդամներով միշտ կը մասնակցի համահայկական խաղերուն:

2015ի Ապրիլին, Յեղասպանութեան 100ամեակին առիթով ՀՄԸՄը կազմակերպեց հեծանուարշաւ մը քաղաքիս կեդրոնական փողոցներուն մէջ, որուն մասնակցեցան նաեւ հայօճախէն մեծ թիւով երիտասարդներ⁸⁴: Այդ մէկը արդէն ապացոյց է, որ հայօճախի երիտասարդութիւնը պատրաստ է մասնակցելու ՀՄԸՄի նախաձեռնութիւններուն, կը բաւէ որ այդպիսի նախաձեռնութիւններ տեղի ունենան:

⁸¹ Համազգայինը վերապահութեամբ յանձն առաւ ձեռնարկներուն իրագործումը: Ձեռնարկներուն տեղացի հայերէն հազիւ 5-6 հոգի մասնակցեցաւ: Ժամանակակից հայաստանեան երաժշտութիւնը բաւական հեռու է բուն սալոնիկահայերէն:

⁸² Անձնական եւ քաղաքական համոզումներու տարակարծութիւններ պատճառ դարձան որ ՀՄԸՄը որդեգրէ ինքնագլուխ գործունէութեան ճանապարհը: Հակառակ այն բոլոր տարակարծութիւններուն, որոնք երբեմն կը ձեւաւորուին համայնքի անդամներու միջեւ, կը կարծենք որ պէտք է իվերջոյ տիրէ պէտք եղած ողջախոհութիւնը եւ ընդհանուր գաղափարի մը շուրջ համախոհութիւնը:

⁸³ Ξεκίνημα της Αρμενικής՝ <http://northbasket.gr/%CE%BE%CE%B5%CE%BA%CE%AF%CE%BD%CE%B7%CE%BC%CE%B1-%CF%84%CE%B7%CF%82-%CE%B1%CF%81%CE%BC%CE%B5%CE%BD%CE%B9%CE%BA%CE%AE%CF%82/> (7.11.2016):

⁸⁴ Ποδηλατοπορεία για τη Γενοκτονία των Αρμενίων στη Θεσσαλονίκη՝ <http://www.thestival.gr/culture/actions/item/235343-tora-ksekinise-i-podilatoporeia-gia-ti-genoktonia-ton-armenion-sti-thessalonik> (6.11.2016):



Միութիւնը ունի սեփական հողամաս, ուր պէտք էր կառուցուէր պասքէթի մարզադաշտ: Այդ կալուածը ցարդ կը մնայ չօգտագործուած վիճակի մէջ: Միութիւնը չունի որեւէ կարետոր նիւթական աղբիր:

Դ.- Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն (Արմենիկ Դեւիկ Էնոսի Արատօբըրյա)

ՀԲԸՄը մօտաւորապէս 2000էն ի վեր չունի որեւէ կազմակերպական ընթացք եւ գործունէութիւն: Այս միութիւնը ժամանակին բաւական հզօր էր, բայց արդէն 1970-80ականներէն սկսեալ սահմանափակ կամ ինքնամիտի, անուանական, կազմալոյծ ներկայութիւն մը ունէր հայօճախին ազգային կեանքէն ներս: Սալոնիկի ՀԲԸՄի միտորը ունի հսկայ հարստութիւն եւ անշարժ գոյք: Նախկին ատենապետ Գէորգ Գոյլունճեան կը վկայէ, որ այսօր ՀԲԸՄի գանձանակը կը մատակարարուի լիազօրուած իրաւաբանի մը կողմէ եւ ամէն տարի ճշտուած գումարները կ'ուղարկուին միութեան կեդրոնական վարչութեան: Միութիւնը չունի վարչական կազմ, այլ միայն պատասխանատու անձ մը, յանձին Հայկանուշ Փորթրօգալեանի, որ կը զբաղի տնտեսական հարցերով: Ան նաեւ հիմնած է Փորթրօգալեան Հիմնարկը եւ զայն կտակած Սալոնիկի քաղաքապետարանին⁸⁵:

⁸⁵ Πρόγραμμα δωρεάν ενισχυτικής διδασκαλίας (Πνευματικό Κοινωνικό Κέντρο <<ΠΟΡΤΟΚΑΛΙΑΝ>>)' <http://www.thessaloniki.gr/portal/page/portal/DioiktikesYpiresies/GenDnsiDioikOikonYpiresion/DnsiKoinProstDimYgeias/TmimaKoinPolitsotFylon/Anakoinwseis/portokalia-n-plirofories> (7.11.2016):

Ե.- Ղարաբաղի եւ Հայաստանի Բարեկամներ (Φίλοι της Αρμενίας και του Καραμπάχ)

Կազմակերպությունը հիմնուեցաւ 2002ին, սալոնիկահայ Միքայէլ Պասմաճեանի կողմէ⁸⁶: Ընկերակցութիւնը ունի պետական ոչ-կառավարական կազմակերպութեան գրանցում՝ համաձայն պետութեան նախատեսուած օրէնսդրութեան, եւ ունի տեղական հայրենակցական միութեան բնոյթ: 2002էն ի վեր ան կատարած է շարք մը բարեգործական աշխատանքներ ՀՀ Նոյեմբերեանի մարզի Ճիլիզա սահմանամերձ գիւղին ջրամատակարարման ցանցի եւ այլ գիւղատնտեսական արդիականացման բարեկարգումներ: Վերջերս, հիմնուեցաւ տեղական գորգի արտադրման աշխատանոց մը, ուր կ'աշխատին գիւղի որոշ կանայք⁸⁷:

Զ.- Եկեղեցաւեր Տիկնանց Մարմին (Ένωση Κυριών Αρμενικής Εκκλησίας)

Միաւորումը ունի զուտ ներհամայնքային բնոյթ՝ ներգրաւելով բոլոր այն կանայք, որոնք կ'ուզեն սիրայօժար մաս կազմել հայկական եկեղեցւոյ աւանդոյթներուն եւ տօնական ծիսակատարումներու սպասարկման: Ան կը կազմակերպէ մատաղօրհնութեան, ծնունդի, զատիկի, խաղողօրհնէքի եւ այլ եկեղեցական տօնակատարութիւնները, պահպանելով հայ առաքելական եկեղեցւոյ աւանդոյթները: Ան չունի որեւէ այլ արտաքին գործունէութիւն եւ հետեւաբար չունի պետական ճանաչում:

Է.- Գալֆայեան Ընդհանրի Հաւաքածոն (Συλλογή Καλφαγιάν)

Գալֆայեաններու հաւաքածոն միութիւն մը չէ, սակայն սալոնիկահայ պատմութեան մէջ իր ունեցած կարեւոր դերակատարութեան համար անհրաժեշտ կը գտնենք այս մասին անդրադառնալ: Հանգուցեալներ Կարապետ եւ Անահիտ Գալֆայեաններու որդիները՝ Արսէն եւ Ռուբէն Գալֆայեաններ, որպէս *անթրք* իրերու մասնագէտներ, ունին անձնական հայկական արուեստի նմուշներ:

2010ի ամռան, Սալոնիկի Բիզանդական Թանգարանին (Βυζαντινό Μουσείο Θεσσαλονίκης) մէջ տեղի ունեցաւ հայկական արուեստի ցուցահանդէս, կազմակերպութեամբ Գալֆայեաններու ընտանիքին⁸⁸: Անկէ առաջ, Կարապետ Գալֆայեանի (1933–2013) ջանքերով եւ Յունաստանի մշակոյթի նախարարութեան տնտեսական եւ բարոյական աջակցութեամբ,

⁸⁶ Պասմաճեանի հօրեղբայրը Մանուկ, եղած էր այն վերապրող անձերէն մէկը, որ 24 Ապրիլ 1915ի գիշերը ձերբակալուած է Պոլսոյ մէջ եւ աքսորուած:

⁸⁷ Պասմաճեանի կարծիքով Սփիւռքի դերակատարութիւնը ՀՀ զարգացման ի խնդիր բաւարար չէ, իսկ սփիւռքեան կառոյցները չեն ցուցաբերեր համապատասխան աշխուժութիւն այդ նպատակի իրագործման համար: Ըստ Պասմաճեանի, անհատ բարեգործական ձեռնարկութիւնները, որոնք կ'իրագործուին տեղւոյն վրայ, շատ անելի արդիւնաւէտ են հայրենիքի զարգացման համար:

⁸⁸ “Aspects of Armenian Art from the Kalfayan Collection”
<http://mbp.gr/en/exhibitions/%E2%80%9CAspects-armenian-art-kalfayan-collection%E2%80%9D> (8.11.2016):

2002ի աշնան Պենաքի Աթենքի Թանգարանին մէջ կազմակերպուեցաւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գանձերու եռամսեայ ցուցահանդէսը⁸⁹: Սալոնիկի Գալֆայեան Արուեստի Ցուցարահը (Kalfayan Galleries) նաեւ հանրածանօթ է յոյն արուեստասէր հասարակութեան իբրեւ ժամանանակից արուեստի ցուցարահներու եւ ցուցադրութիւններու կեդրոն⁹⁰:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն

1947էն ետք, Սալոնիկի հայօճախին մէջ միակ քաղաքական կազմակերպութիւնը ՀՅԴ կառոյցն ու ենթակառոյցներն են, որոնք ցայսօր կը գործեն:

ա. Սալոնիկի ՀՅԴ Յունաստանի Երիտասարդական Միութեան «Սողոմոն Թեղիլիբեան» Խումբ (Αρμενική Νεολαία Ελλάδος): ՀՅԴ Սալոնիկի «Սողոմոն Թեղիլիբեան» խումբը կը պատկանի ՀՅԴ Յունաստանի Երիտասարդական Միութեան, որ ունի երեք խումբ, որոնցմէ երկուքը կը գործեն Աթենքի մէջ: Անոնք կը գումարեն ամէնամեայ պատգամաւորական ժողովներ, ուր կ'ընտրուի կեդրոնական վարչութիւն: Սալոնիկի խումբը կը բաղկանայ մօտ 20-25 անդամներէ, որոնց մեծամասնութիւնը Հայաստանէն Սալոնիկ հաստատուած 49 ընտանիքներու զաւակներ են: Խումբերը չունին առանձին պետական ճանաչում, այլ միայն՝ որպէս ընդհանուր միութիւն, որ կը ներկայանայ կեդրոնական վարչութիւնով⁹¹: Սալոնիկի մէջ երիտասարդականի գործունէութիւնը կեդրոնացած է մանաւանդ ազգային խնդիրներու եւ մարտահրաւերներու վրայ⁹²:

Տեղական վարչութիւնը անմիջական գործակցութիւն ունի քաղաքիս ՀՅԴ կոմիտէութեան հետ: Միութեան անդամները մասնակից են բոլոր արտաքին ձեռնարկներուն, որոնք առնչուած են Հայ Դատին եւ Արցախի ինքնորոշման իրաւունքին⁹³: Անդամները կը զբաղին յատկապէս հրապարակային քարոզչական գործունէութեամբ, սատար կանգնելով ընդհանուր հայօճախին բոլոր արտաքին ու ներքին ձեռնարկներուն:

⁸⁹ Armenian Relics of Cilicia from the Museum of the Catholicosate in Antelias, Lebanon՝ <http://www.benaki.gr/index.asp?id=50501&lang=en&sid=279> (8.11.2016):

⁹⁰ Kalfayan galleries՝ <http://www.kalfayangalleries.com/index1en.htm> (8.11.2016. նաեւ՝ Απεβίωσε ο κοσμοπολίτης συλλέκτης, Καραμπέτ Καλφαγιάν Σε ηλικία 80 ετών. <http://www.naftemporiki.gr/story/684652/apebiose-o-kosmopolitis-sullektis-karampet-kalfagian> (8.11.2016):

⁹¹ Αρμενική Νεολαία Ελλάδος՝ <http://ayfgreece.com/> (9.11.2016):

⁹² Θεσσαλονίκη: Έστισε περίπτερο ενημέρωσης η Αρμένικη Νεολαία Ελλάδος՝ <http://www.zougla.gr/greece/article/8esaloniki-estise-periptero-enimerosis-i-armeniki-neolea-elados> (9.11.2016):

⁹³ Ο λόγος της Αρμενικής Νεολαίας Ελλάδος στην πολιτική εκδήλωση της Θεσσαλονίκης՝ <http://ayfgreece.com/o-logos-tis-armenikis-neolaias-ellados-stin-politiki-eksilos-tis-thessalonikis/> (9.11.2016):

ՀՅԴ երիտասարդականի անունով եւ կազմակերպութեամբ ամէն տարի Ապրիլ 24ի օրը բողոքի ցոյց կը կազմակերպուի Աթենքի թրքական դեսպանատան առջեւ եւ Սալոնիկի թրքական հիւպատոսարանին դիմաց⁹⁴:

Միութիւնս գործօն մասնակցութիւն ունի նաեւ ներքին ազգային կեանքին եւ հայապահպանման առաքելութեան: Հակառակ շարքերուն ազգանուէր տրամադրութեան, կը նկատուի սակայն գիտելիքներու պակաս՝ ազգային հարցերու պատմահրաւական հիմքերու նկատմամբ:

Յունաստանի ընդհանուր երիտասարդականի կառոյցը չունի նիւթական մասնաւոր աղբիւրներ եւ կը գործէ կուսակցութեան ու հայօճախին տնտեսական աջակցութեամբ:

բ. Սալոնիկի ՀՅԴ Յունաստանի Պատանեկան Միութեան «Լեւոն Շանթ» խումբ (Αρμενική Προνοεοαία Ελλάδος) Յունաստանի ՀՅԴ Պատանեկան Միութիւնը ունի երեք խումբ, որոնցմէ մին կը գործէ Սալոնիկի մէջ: Պատանեկանը ներհամայնքային ներկայութիւն եւ գործունէութիւն ունի, նպատակ ունենալով դաստիարակել նոր սերունդը՝ կամաւոր ազգանպաստ կազմակերպուած աշխատանքի:

Այսօր, Սալոնիկի մէջ պատանեկանը կը բաղկանայ միայն ՀՀէն եկած ընտանիքներու որդիներէ: Այս իրողութիւնը փաստ մըն է, որ հայօճախին ազգային կեանքի յաջորդ սերունդը պիտի բաղկանայ ջախջախիչ մեծամասնութեամբ նորեկ ընտանիքներու շառաւիղներէն:

գ. Սալոնիկի ՀՅԴ «Յակոբ Գասապեան» Կոմիտէութիւն

ՀՅԴ Յունաստանի կառոյցը (Տարօնի շրջան) բաղկացած է հինգ կոմիտէներէ: Երեք կոմիտէութիւններ կը գործեն Աթենքի շրջանին մէջ. մէկը՝ Սալոնիկ, միւս ենթակոմիտէութիւնը՝ Քսանթի քաղաքին մէջ: Երկամեայ դրութեամբ կը գումարուի շրջանային ժողով, որ իր կարգին կ'ընտրէ կեդրոնական կոմիտէ: Սալոնիկի կուսակցական կազմը ունի 40ի մօտ շարքայիններ: Կոմիտէն կը զբաղի բոլոր ներհամայնքային խնդիրներով: Իր անդամներուն մեծամասնութիւնը մաս կը կազմէ գրեթէ բոլոր վերոնշեալ յարակից միութիւններու աշխատանքներուն: Կոմիտէն կը մշակէ նաեւ հայօճախին արտաքին մարտահրաւերներու դիմագրաւումը եւ քարոզական աշխատանքը: Ասոնք կ'իրագործուին Հայ Դատի Յանձնախումբի անուան տակ:

Պէտք է շեշտել, որ կուսակցութիւն հասկացութիւնը փոքր հաւաքականութիւններու համար, ինչպէս Սալոնիկը, կը կրէ արեւի ընդլայնուած հայրենասիրական կազմակերպութեան բնոյթ եւ ոչ՝ զուտ քաղաքական միաւորի գործելաձեւ եւ ըմբռնում:

⁹⁴ Πορεία μνήμης στη Θεσσαλονίκη για την 101 επέτειο της Γενοκτονίας των Αρμενίων (http://www.ethnos.gr/koinonia/arthro/poreia_mnimis_sti_thessaloniki_gia_tin_101_epeteio_tis_genoktonias_ton_armenion-64366566/ (9.11.2016)):

դ. ՀՅԴ Յունաստանի Հայ Դատի Յանձնախումբ (Αρμενική Εθνική Επιτροπή Ελλάδος)

Հայ Դատի Յանձնախումբը պատասխանատու է բոլոր արտաքին յարաբերություններու եւ ընդհանուր արտաքին քարոզչութեան իրականացման: Հակառակ որ Հայ Դատի Յանձնախումբի դերակատարութիւնը Յունաստանի մէջ շատ կարեւոր ու աշխուժ է, ան չունի որեւէ պետական գրանցում⁹⁵: Ան կը ներկայանայ որպէս համայն հայութեան ներկայացուցիչ եւ ընդհանուր կամ տեղական հայութեան շահերը պաշտպանող մարմին:

Քարոզչական աշխատանքը Յունաստանի, առաւել եւս Սալոնիկի ու Թրակիոյ շրջաններուն մէջ բաւական հեզասահ է, քանի որ յոյն հասարակութիւնը բարեացակամ է հայերու հանդէպ՝ գիտակցելով նոյն Թուրքիոյ կողմէ սպառնացող վտանգին: Կարելի է ըսել նաեւ, որ պետական իշխանութիւններու հետ ալ կը գոյանայ այդ հայամերձ բարենպաստ քաղաքական մթնոլորտը, սակայն վերջին տարիներուն այդքան ալ միանշանակ չէ այս մէկը:

Յունաստանի նոր սերունդի իշխանաւորները ւելի մօտ են իրատես քաղաքականութեան (real politic), որոշ չափով հեռանալով ասանդական զգացական ազգային մտածելակերպէ⁹⁶: Յամէնայնդէպս, թրքական ճնշումը Յունաստանի նկատմամբ միշտ առկայ է⁹⁷ եւ այդ պատճառաւ հայկական գործունէութիւնը եւ հայութեան պահանջքները ւելի դիրաւ ընդունելի կ'ըլլան, քան այլ երկիրներու մէջ⁹⁸:

Հայ Դատի Յանձնախումբը Յունաստանի մէջ յոյն քաղաքական գործիչներու հետ շատ լաւ յարաբերություններ կը պահպանէ, միաժամանակ՝ չէզոք քաղաքական կողմնորոշում ունի յունական կուսակցութիւններուն նկատմամբ եւ չի միաւորուիր (թէկուզ պաշտօնապէս) որեւէ քաղաքական ուժի հետ:

⁹⁵ Institutions and their Agents in Diaspora: A Comparison of Armenians in Athens and Alevis in Germany Martin Sökefeld and Susanne Schwalgin՝ <http://www.transcomm.ox.ac.uk/working%20papers/schwal.pdf> (7.11.2016):

⁹⁶ Αρμενική Εθνική Επιτροπή Ελλάδος՝ <http://www.armenianportal.gr/politiki/armeniki-ethniki-epitropi-ellados-deltio-tyrou> (9.11.2016):

⁹⁷ Զոր օրինակ, 2016ի աշնան երբ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան սպառնաց Յունաստանի Լոզանի Դաշնագրի վերանայումով՝ յօգուտ թրքական տարածքային սահմաններու (Erdogan Endangers Turkey-Greece Ties by Disputing Borders Treaty՝ <http://www.presstv.ir/Detail/2016/09/30/487096/Greece-Turkey-Tsipras-Erdogan-Treaty-of-Lausanne> (10.11.2016):

⁹⁸ Η Αρμενική Εθνική Επιτροπή Ελλάδος (Προστατέψτε τον Γκάρο Παϊλά՝ [http://ancnews.info/?tag=%CE%B1%CF%81%CE%BC%CE%B5%CE%BD%CE%B9%CE%BA%CE%B7-%CE%B5%CF%80%CE%B9%CF%84%CF%81%CE%BF%CF%80%CE%B7-%CE%B5%CE%BB%CE%BB%CE%B1%CE%B4%CE%BF%CF%83](http://ancnews.info/?tag=%CE%B1%CF%81%CE%BC%CE%B5%CE%BD%CE%B9%CE%BA%CE%B7-%CE%B5%CE%B8%CE%BD%CE%B9%CE%BA%CE%B7-%CE%B5%CF%80%CE%B9%CF%84%CF%81%CE%BF%CF%80%CE%B7-%CE%B5%CE%BB%CE%BB%CE%B1%CE%B4%CE%BF%CF%83) (9.11.2016):

Այսուամենայնիւ, թէ՛ համայնական, թէ՛ տեղական իշխանութիւններու նկատմամբ Հայ Դատի Յանձնախումբը կը քաջալերէ որեւէ կուսակցութեան հայանպաստ մօտեցում ունեցող թեկնածուն⁹⁹ եւ ո՛չ թէ կուսակցութիւնը ընդհանրապէս: Առ այդ, կը պաշտպանուի չէզոքութեան մարտավարութիւնը եւ լրախտական բնոյթ ունեցող աշխատելաճը: Սալոնիկի մէջ Հայ Դատի Յանձնախումբը շատ լաւ յարաբերութիւններ ունի տեղական իշխանութիւններուն հետ եւ իր դիմումները միշտ լսելի կը դառնան: Անհրաժեշտ է նշել, որ Հայ Դատի Յանձնախումբը հակառակ յունական երկու կուսակցութիւններու առաջարկներուն, երբեք քաջալեր չհանդիսացաւ որեւէ հայու Յունաստանի խորհրդարանի կամ քաղաքապետարանի ընտրութիւններու թեկնածութեան, միշտ իր չէզոք կեցուածքը պահելով:

Սալոնիկի գաղթականական քաղաքի հանգամանքը մինչեւ այսօր ալ զգալի է նաեւ առօրեայ մարդկային յարաբերութիւններու մէջ: Բազմաթիւ յունական հայրենակցական միութիւններ կը գործեն հոն, որոնց հետ Հայ Դատի Յանձնախումբը անմիջական շփման մէջ է:

Միւս կողմէն, իրենց անձնական որոշումով այսօր գոյութիւն ունին երկու հայազգի փոխքաղաքապետեր. Ա) Աթենքի Նէա-Չմիրնիի Վանկելիս Խաչատուրեանը¹⁰⁰ եւ Սալոնիկի Օրէոքասորո շրջանի փոխքաղաքապետ Պետրոս Ադամեանը¹⁰¹:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Սալոնիկի հայօճախը անցեալին ունեցած է բազմաթիւ հրատարակութիւններ: 1923-38՝ հրատարակուած են աւելի քան 10 հայալեզու թերթեր (ինչպէս՝ *Այրք՝* 1923, *Նոր Այրք՝* 1924, *Հորիզոն՝* 1927-37, *Աշխարհանք՝* 1926-27, *Արեւելք՝* 1930-38), որոնք «կարեւոր դեր ունեցան Հիւսիսային Յունաստանի հայաշաղկ համայնքին մէջ»¹⁰²:

⁹⁹ Ինչպէս նախկին կրթութեան նախարար Կոստանդինոս Կիլեքասի (Κώνσταντινος Γκιουλεκας, անդամ՝ Նէա Տիմորթաթիա կուսակցութեան) հետ, որ միշտ կ'աջակցի հայկական համայնքի բոլոր ձեռնարկներուն (Κίνηση Κώστα Γκιουλέκα με Όμιλο σκέψης και προβληματισμού՝ <http://www.xronos.gr/epikairota/kinisi-kosta-gkiouleka-me-omilo-skepsis-kai-provlimatismoy> (10.11.2016):

¹⁰⁰ Χατζατουριάν, Βαγγέλη՝ (http://www.biblionet.gr/author/53129/%CE%92%CE%B1%CE%B3%CE%B3%CE%AD%CE%BB%CE%B7%CF%82_%CE%A7%CE%B1%CF%84%CE%B6%CE%B1%CF%84%CE%BF%CF%85%CF%81%CE%B9%CE%AC%CE%BD (10.11.2016):

¹⁰¹ Διέπρεψε ο Πέτρος Αταμιάν, στον διευρυμένο Δήμο Ωραιοκάστρου!՝ (<http://www.inewsgr.com/292/dieprepre-o-petros-atamian-ston-dievrymeno-dimo-oraiokastrou.htm> (10.11.2016):

¹⁰² Χασιώτης, էջ 103:

Այս հրատարակություններուն մէջ ակնյայտ է հայ կուսակցութիւններու գաղափարաբանական բեւեռացումը, որ գոյութիւն ունէր այդ ժամանակներուն¹⁰³:

Այսօր, սակայն, իրողութիւնը շատ տարբեր է: 1947էն ետք Սալոնիկի մէջ լոյս չտեսաւ որեւէ թերթ կամ պարբերական: Սալոնիկահայերը կ'օգտուին Աթենք հրատարակուող *Ազալօր օր*¹⁰⁴ օրաթերթէն, որ լոյս կը տեսնէ 1944էն ի վեր, եւ *Արմենիքա*¹⁰⁵ յունալեզու եռամսեայ պարբերաթերթէն, որ շրջանառութեան մէջ է 1998էն ի վեր:

Ըստ *Արմենիքայի* եւ *Ազալօր օրի* տնօրէն Մայք Չիլիսկիրեանի, Սալոնիկի մէջ օրաթերթը ունի քսան բաժանորդ, իսկ պարբերաթերթը՝ 73¹⁰⁶: Ակնյայտ է, որ ընթերցողներու թիւերը շատ նուազ են: Առաւել եւս, նշմարած ենք որ շատեր *Ազալօր օրի* բաժանորդագրուած են իբրեւ կուսակցական կամ խղճի պարտականութիւն: Բաժանորդներու մեծ մասը դժուարութեամբ հայերէն կը կարդայ: Միւս կողմէ՝ Յունաստանի վերջին տարիներու նեղ տնտեսական պայմանները չեն նպաստեր օրաթերթի տարեվճարի պարտականութեան լրացման: *Ազալօր օրը*, որ ներկայիս Եւրոպայի միակ հայալեզու ամէնօրեայ օրաթերթն է, կը դիմագրաւէ գոյատեւման լուրջ տնտեսական խնդիրներ, որոնք օրըստօրէ անլի կը սաստկանան:

Արմենիքայի պարագային ընթերցողները անլի են, նախ որովհետեւ թերթին լեզուն յունարէն է, տարեվճարը անլի քիչ, իսկ նիւթերը՝ անլի դիւրընթեռնելի: Ուշագրաւ է, որ հակառակ հայալեզու մամուլի նուազումին, յունական հրատարակչատուներ վերջին 30 տարիներուն լոյս ընծայեցին բազմաթիւ հայագիտական յունալեզու գիրքեր¹⁰⁷:

ՀԱՅՕԾԱԽԻՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ստորեւ՝ խնդիրներ, որոնք կը սպառնան հայութեան ինքնութեան պահպանման, տկարացնելով որոշ չափով հայօճախին ազգային կեանքը.-

ա. Հայախօսութեան խնդիր

Հայախօսութիւնը սալոնիկահայ իրականութեան մէջ գրեթէ գոյութիւն չունի, մանաւանդ նոր սերունդի պարագային: Հայօճախէն ներս եւ դուրս՝ հայերէնը գործածական լեզու չէ: Մասնատրապէս արեւմտահայերէնը շատ անլի տխուր վիճակի մէջ կը գտնուի այսօր նաեւ հայօճախի գործուն անդամներուն համար¹⁰⁸:

¹⁰³ Նոյն, էջ 104:

¹⁰⁴ *Ազալօր օր (Օրաթերթ)* <http://www.azator.gr/> (11.11.2016):

¹⁰⁵ *Արմենիքա (Պարբերաթերթ)* <http://www.armenika.gr/> (11.11.2016):

¹⁰⁶ Անձնական հարցազրոյց, Յուլիս 2016:

¹⁰⁷ Βιβλιογραφία στην ελληνική γλώσσα για την Αρμενία και για το Αρμενικό Ζήτημα՝ <http://www.armeniangenocide100.gr/vivliografia> (11.11.2016):

¹⁰⁸ Western Armenian in peril՝ http://www.azad-hye.net/article/article_view.asp?re=7341ff67 (11.11.2016): Δυտիկ Արմենիկ գլօսսա.

Հայերէն ոչ-վարժ գիտցող յունահայերու պարագային զգալի կ'ըլլան հնչիւնական շեղումներ¹⁰⁹: Յունարէնի ազդեցութեամբ գոյութիւն ունին շեղումներ արեւմտահայ «հ» հնչիւնէն՝ «խ»ի, ինչպէս նաեւ «չ» հնչիւնէն՝ «ց»ի, եւ «թ» «ր» «տ» տառերու միջեւ: Քանի որ յունարէնի բաղաձայնները համապատասխան չեն հայերէնին, ոչ-հայերէն կրթութիւն ունեցողը կը մնայ յունարէնի հնչիւնական համակարգի սահմանափակումներուն մէջ¹¹⁰:

Ինչ կը վերաբերի ուղղագրութեան, զայն ամենամեղմ ձեւով կրնանք նկարագրել որպէս ուղղագրական քառս: Իւրաքանչիւր սալոնիկահայ ունի իր անձնական ուղղագրական կանոնները՝ եթէ ... նախ եւ առաջ ծանօթ է հայերէնի տառերուն: Եթէ ի սկզբանէ արեւմտահայերէնի ուղղագրական եւ հնչիւնաբանական դժուարութիւններուն վրայ անլեզունքը հայերէնի ուսուցման բացը, ապա կը ստանանք այն պատասխանը թէ ինչու՞, զոր օրինակ, «Հայաստան» բառը հանդէս կու գայ իբրեւ «Խայաստան», «Հայասդան» կամ «Հայասթան»...: Կան նաեւ որոշ սխալ արտայայտութիւններ, յունարէնէ ընդօրինակուած, բայց արմատացած տեղական խօսակցական լեզուին մէջ: Օրինակ, կարելի է լսել «երկար ժամանակ ունիմ տեսնալու քեզի», ըսել ուզելով թէ «երկար ժամանակ չեմ տեսած քեզ», կամ՝ «ինչպէ՞ս կ'երթան դասերդ» փոխան՝ «ինչպէ՞ս կ'ընթանան դասերդ» արտայայտութեան, «եկեղեցիի երգերը» փոխան՝ «եկեղեցոյ շարականները», «գիտե՞մ ես» փոխան՝ «ես ի՞նչ գիտնամ»ի, «քիչիկէ մը պիտի գամ» փոխան՝ «քիչ ետք պիտի գամ»ի ...: Այլ բառ մը, որուն սխալ նշանակութիւնը լայն գործածութիւն ստացած է... հայօճախին անդամներուն մօտ՝ «տօնակատարութիւն» բառն է: Օրինակ՝ Սալոնիկի գործուն անդամներէ կարելի է լսել հետեւեալ արտայայտութիւնը. «Մեծ յաջողութեամբ տօնեցինք Հայոց Յեղասպանութեան օրը» կամ «Ապրիլ 24ի տօնակատարութիւնը» փոխանակ ոգեկոչում բառը օգտագործելու¹¹¹:

Արեւելահայերէնը յարաբերաբար անլի կ'օգտագործուի, քանզի ՀՀէն արտագաղթած ընտանիքներուն մէջ դեռ կը գործածուի որպէս հաղորդակցման լեզու: Հարկաւ, այդ մէկը չի նշանակեր, որ փայլուն ապագայ ունի

նաեւ՝ Προσοπικέζ. Տես. <http://www.armenika.gr/politismos/187-glwssa/672-armeniki-glwssa> (11.11.2016):

¹⁰⁹ Ռ.Կ. Սաքապետոյեան, *Ուղեցոյց: Ժամանակակից հայոց լեզու (հնչիւնաբանութիւն եւ բառագիտութիւն)*. արեւմտահայերէն, Երեւան, Լիմոն, 2008, էջ 75:

¹¹⁰ Զարմանալի չի թուիր ուրեմն, եթէ «Հայաստան» բառը արտասանուի «Խայաստան», իսկ «Յովիկ» անունը՝ «Խովիք», «Չեմ ուզեր» բառը՝ «ցեմ ուզեր», կամ «շորջը»՝ «սուրց»... եւն.:

¹¹¹ Պէտք է ընդունիլ, որ հայերէնի գրաճանաչ (ը)ըլլալը հայրենասիրութեան եւ ազգային պատկանելիութեան չափանիշ չէ: Իդէպ, լեզուաբանական դիտանկիւնէ այս աշխատութիւնն ալ զուրկ չէր յունարէնի լեզուամտածողութենէն եւ շարահիսական յունատիպ ազդեցութիւններէն: Այս աշխատութեան խմբագրական աշխատանքը տարաւ բանասէր, հայերէնի ուսուցչուի հալէպցի Սօսի Միշոյեանը:

ան, քանի որ արեւելահայերէնն ալ արդէն սկսած է աղքատանալ՝ սահմանափակուած մնալով առօրեայ նեղ գործածութեամբ եւ՝ միայն անհրաժեշտ բառապաշարով: Արեւելահայ ընտանիքներու զաւակներու խօսակցութեան մէջ ալ յայտնի են որոշ հնչիւնական փոփոխութիւններ-սայթաքումներ եւ արտայայտման սխալներ:

Կարելի է ըսել, որ տոկոսային առումով արեւելահայերէնը արեւելի մեծ նահանջի մէջ է, քանի որ արտագաղթեալ ընտանիքներուն զաւակները արդէն իսկ կը խուսափին հայերէն խօսելէ:

բ. Խառն ամուսնութիւններ

Խառն ամուսնութիւնները տեղի կ'ունենան արեւելի մեծ թափով, յատկապէս հայկական Սփիւռքի արեւմտեան կողմն աշխարհին: Յունաստանի մէջ այս երեւոյթը համատարած է եւ բաւական հին:

Եթէ նկատի առնենք հայ եւ յոյն ժողովուրդներու պատմամշակութային ընդհանուր ակունքները եւ նոյն թշնամիի ընկալումը՝ ա՛լ արեւելի կը դիրաւ հասկնալի կը դառնան հայերու եւ յոյներու մերձեցման ու միաձուլման զգացումը եւ ընթացքը:

Այս երեւոյթը ներկայիս կը վերաբերի արեւելի շատ տեղաբնիկ հայութեան, սակայն բազմաթիւ խառն ամուսնութեան օրինակներ կան նաեւ նոր հաստատուած հայերու մէջ եւ յատկապէս՝ հայ կանանց: Հայկական եկեղեցւոյ ամուսնութիւններու տոմարին մէջ կը գտնենք 1945ին արձանագրուած երեք խառն ամուսնութիւններ: Կան նաեւ օրինակներ, որ 1946-47ին իրենց հայ ամուսիններուն կողքին յոյն կիներ ներգաղթած են Խորհրդային Հայաստան: Ներկայիս, կը տեսնենք որ խառն ամուսնութիւնները սովորական երեւոյթ են, իսկ հակառակը՝ արտակարգ ու անսովոր: Օրինակի համար, 20 Յունուար 1980էն մինչեւ 19 Մայիս 1990 Սալոնիկի հայկական եկեղեցւոյ տոմարին մէջ արձանագրուած 23 ամուսնութիւններէն միայն հինգը ներազգային են, 14ը՝ խառն (յոյնի հետ) եւ 4ը՝ ներազգային, բայց այլ երկրի հայու հետ: Պարզ է, որ հայ կանայք, որոնք ամուսնացած են յոյնի հետ, այս ցանկին մաս չեն կազմեր, քանի որ արձանագրուած են յունական եկեղեցիներու տոմարներուն մէջ:

Արեւելի ճշգրիտ պատկերացում մը ունենալու համար վերջին տասնամեակի ամուսնութիւններուն մասին, Սալոնիկի Ս. Աստուածածին եկեղեցւոյ տոմարներէն կազմեցինք հետեւեալ պատկերը, 9 Յուլիս 2006էն մինչ 6 Յուլիս 2016ին տեղի ունեցած 42 պսակադրութիւններուն մասին.-

Ասոնցմէ 8ը յունահայերու էին, իսկ 6ը՝ խառն եւ միայն 2ը՝ ներազգային¹¹²: Երկու ներազգային ամուսնութիւնները կը վերաբերին յունահայ այրմարդու եւ Հայաստանի Հանրապետութիւն ծնած կնոջ: Կայ նաեւ ամուսնութիւն մը յոյնի եւ ՀՀ քաղաքացի հայ կնոջ միջեւ: Մնացեալ բոլոր ամուսնութիւնները նախկին ԽՍՀՄի երկիրներէ եկած հայերու միջեւ են,

¹¹² ԹՅԱ (2006-2016):

մեծամասնությամբ ՀՀ քաղաքացի (49 հոգի): Առ այդ, կը տեսնենք հետևելալ քաղաքացիութիւններ ունեցող անձերու ամուսնութիւններ.-

49 հոգի ՀՀ քաղաքացի, հաստատուած Յունաստան Սալոնիկ կամ Սալոնիկի մօտակայ շրջաններ: 20 հոգի Յունաստանի քաղաքացի, որոնցմէ 8՝ յունահայ, իսկ 12՝ ՀՀէն կամ Վրաստանէն եկած հայեր, որոնք ստացած են յունական քաղաքացիութիւն: 10՝ ՌԴ քաղաքացի հայեր, 4՝ Վրաստանի քաղաքացի հայեր, 1՝ Գերմանիոյ քաղաքացի: Տեղի ունեցած են 10է աւելի խառն ամուսնութիւններ բնիկ սալոնիկահայ աղջիկներու եւ յոյներու միջեւ, որոնք չեն ներառուիր տուեալ ցանկ:

Ինչ կը վերաբերի ՀՀ ծնած եւ յոյներու ամուսնացած հայ աղջիկներուն՝ գրեթէ անկարելի է ստանալ որեւէ տեղեկութիւն, բայց կ'ենթադրուի որ այս թիւն ալ բաւական մեծ է: Եթէ գումարենք այս բոլոր հաշուարկները՝ կը հասնինք երեք շատ կարեւոր եզրակացութիւններու.- ա) ընդհանրապէս սփիւռքահայ բնիկ հայերու թիւը շատ փոքր է, բ), այդ փոքր թիւին վրայ խառն ամուսնութիւններու երեւոյթը շատ տարածուած է (1980-2016 ունինք 6 ներազգային ամուսնութիւն եւ 21՝ խառն, աւելցնելով նոյն թիւին մօտ աղջիկներու ամուսնութիւնները (ոչ-հայ այրերու հետ), որոնք ներառուած չեն եկեղեցւոյ տոմարին մէջ), գ) սալոնիկահայութեան գերակշռող մասը ՀՀ քաղաքացիներ են, որոնք Սալոնիկ հաստատուած են 1990էն ետք:

Իդէպ, նշենք որ առաջին ՀՀ քաղաքացիներու ամուսնութիւնը տեղի ունեցած է 5 Մարտ 1994ին: Այս ամուսնութիւնը՝ 23 Հոկտեմբեր 1932էն մինչեւ 6 Յուլիս 2016 գրանցուած է 872 պսակներուն 751րդն է՝¹¹³:

Խառն ամուսնութիւններու հարցը հայապահպանման տեսակէտէ շատ վտանգաւոր, սակայն անխուսափելի իրականութիւն մըն է: Այս խնդրոյ շուրջ դատապարտական մօտեցումը ո՛չ արժէք, ո՛չ ալ արդիւնք ունի: Խառն ամուսնութիւնը, մեր կարծիքով, միշտ չէ որ ազգային զգացումներու եւ ինքնութեան ուրացման նշան է եւ պէտք չէ դիտուի որպէս թունդ օտարամոլութիւն: Անշուշտ, այս գործընթացը ճուրման եւ օտարացման վտանգը կը դիւրացնէ, մանաւանդ յաջորդող սերունդի պարագային:

գ. ՀՀէն եկած եւ տեղաբնիկ հայերու միջեւ յարաբերութիւնները

1990էն սկսեալ ՀՀի հայերու մեծ հարտահոսք մը սկսաւ դէպի արտասահման¹¹⁴: Յունաստանը եւ Սալոնիկը, որպէս առեւտրական զարգացած երկիր եւ քաղաք, աշխատանքի ապահովութեան հեռանկարով իրենց վրայ հրափրեցին արտագաղթող հայերու հետաքրքրութիւնը: Այսպէս, նոյն ազգի պատկանող, բայց իրարմէ հեռացած հատուածները հանդիպեցան հիւրընկալ յունական հողին վրայ: Առկայ էին փոխադարձ վերապահութիւն,

¹¹³ ԹՍԱ (1932-2005/2006-2016):

¹¹⁴ The Demographic-Economic Framework of Migration՝ http://www.migrationpolicycentre.eu/docs/migration_profiles/Armenia.pdf (20.11.2016):

թերահաւատութիւն եւ վանողական մօտեցում՝ տեղաբնիկ հայերու կողմէ, որոշ բացառութիւններով... այս երկու զանգուածներու կեանքի եւ կենցաղի հասարակ յայտարարը փոքր էր: Ասիկա գոնէ այդ շրջանին դժուարացուց մերձեցման եւ միաձուլման ընթացքը: Անկէ ի վեր «հայաստանցի»ի եւ «տեղացի»ի հասկացութիւնը գոյութիւն ունի քաղաքիս հայկական շրջանակներուն մէջ ոչ-ստորադասական կամ խտրական որակաւորումով:

Հայօճախը սակաւաթիւ էր իր մէջ տարրալուծելու նոր ժամանած հայերը: Փոքր էր նաեւ «մարսելու» եւ իրացնելու նոր ժամանած հայերով ձեւաւորուած կենցաղային նոր դրութիւնը...: Ընդհակառակը, այսօր կրնանք ըսել թէ ի վերջոյ հիները «մարսուեցան» բազմամարդ արտագաղթող հայերու կողմէ ..., իսկ հայօճախը ստացաւ նոր մարդուժ եւ աշխուժութիւն:

Այսօր, այս տարանջատումը կը մօտենայ վերացման, բայց չենք կրնար ըսել, որ բոլորովին չկայ: Այդ առումով մեծ հոգածութիւն ցուցաբերեցին հայօճախի որոշ անդամներ¹¹⁵: Մեծ դեր ունեցած են նաեւ ատենի ՀԳԽի շրջանային վարչութիւններ եւ հեռատես անդամներ:

Հայօճախը որպէս կառոյց ուշացաւ իր ընդգրկման գործընթացին մէջ եւ միքանի տարի մնաց մոլորած ու վերապահ՝ տեղի ունեցող իրադարձութիւններուն նկատմամբ: Հայօճախը պատրաստ չէր նոր եկած հայերու ընդգրկման համար կազմակերպ կեցուածք եւ գործընթաց որդեգրելու: Կար քննադատական սխալ կեցուածք՝ թէ ինչո՞ւ անոնք կը լքեն հայրենիքը: Հայօճախին կառոյցները գաղափարական երկրնտրանքի դիմաց էին՝ օգնեն ՀՀին եւ Արցախի՞ն, թէ՞ այն մարդոց, որոնք արտագաղթի վիճակի մատնուած՝ կը պայքարէին անելի բարօր ապագայի հեռանկարով: Միւս կողմէն, ՀՀէն կամ Վրաստանէն եկողներն ալ մասնաւոր հետաքրքրութիւն չունէին հայօճախին ազգային կեանքի միանալու: Անոնց համար Յունաստանը «ժամանակաւոր» աշխատանքի ձեռքբերման միջոց էր միայն: Այսպիսով, այդ երկու կողմերու ժամանակաւոր ինքնախաբէութիւնը ձեւաւորեց կարգավիճակ մը, որ կը թելադրէր անելի լուրջ եւ անելի հասուն մօտեցում:

1994ին սկսան ներգրաւման առաջին փորձերը, յատկապէս նոր սերունդին համար, որուն առջեւ ուժացման վտանգը յայտնի էր ու արագընթաց: Եղան նաեւ հայօճախին անդամներուն կողմէ սխալներ, որոնք բաւական հեռացուցին նորեկ հայերը: Օրինակ, եղան բողոքներ հայկական եկեղեցւոյ ծէսերու սպասարկման վճարումի նկատմամբ, մասնաւորաբար՝ հարսնիք, մկրտութիւն, յուղարկաւորութիւն, մինչ նոյն մարդիկ շատ լուրջ գումարներ կը ծախսէին հարսանեկան եւ մկրտութեան ճաշկերոյթներուն համար: Կը թուի՝ որոշ մարդոց համար ասիկա պատրուակ եղաւ ազգային ինքնագի-

¹¹⁵ Հանգուցեալ Սիրուհի Գասպարեան՝ համայնքիս վաստակաւոր անդամ, իր վաղամեռիկ որդիին Մարթա Գասպարեանի անունով հիմնեց բարեսիրական միութիւն մը, որուն նպատակը սատարելն էր այդ տարիներուն աշխատանքի կարօտ մարդոց, որոնք կը դիմագրաւէին կենցաղային խնդիրներ:

տակցութեան ուրացման: Շատ հայրենակիցներ այդ ժամանակ (եւ հիմա) որոշեցին ամուսնանալ կամ մկրտութիւն կատարել յունական եկեղեցիներուն մէջ, ակնկալելով փաստաթուղթերու ատելի հեշտ եւ նուազ ծախսալից ձեռքբերում: Նկատի առնուելու է նաեւ, որ յոյն քաւորի ընտրութիւնը մղիչ ուժ էր դէպի այդ ուղղութիւն: Կան նաեւ տեղեկութիւններ որ յունաց եկեղեցին չէր պահանջեր փաստաթուղթեր՝ ՀՀի մէջ անձի ընտանեկան կարգավիճակին մասին:

Հակառակ հայկական եկեղեցւոյ հանդէպ եղած բողոքներուն, այնուամենայնիւ 4 Հոկտեմբեր 2006էն մինչ 10 Յուլիս 2016ին արձանագրուած են 263 մկրտութիւններ, որոնց 121ը՝ ՀՀի մէջ ծնած երեխաներու¹¹⁶: 80 մկրտութիւնները Յունաստանի մէջ ծնած նոր եկող ընտանիքներու զաւակներ են, իսկ մնացեալը՝ նախկին ԽՍՀՄի մէջ ծնած հայ երեխաներ: Այս բոլոր տուեալները ապացոյց են, որ հակառակ տարբեր կարծիքներու եւ սխալ կամ ճիշտ որոշումներու, ազգային մտածելակերպի եւ ինքնութեան պահպանման գործօնը արտասահմանի մէջ նախ եւ առաջ անձնական որոշում է:

Այսօր, հայօճախին սահմաններէն ներս գտնուող երիտասարդներուն մեծամասնութիւնը նոր հաստատուած ընտանիքներու զաւակներ են: Յայտնի է, որ ժամանակի բերումով գործակցութեան եւ փոխհասկացողութեան ոգին զարգացած է ատելի քան երբեւէ: Ասիկա չի նշանակեր, սակայն, որ զանգատներ չկան կամ քննադատական տրամադրութիւնը՝ հայօճախին հասցէին, բոլորովին անհետացած է: Նշմարած ենք, որ երբեմն հայօճախին պատկան մարմիններուն (որ մինչ օրս կը բաղկանան միայն բնիկ հայերէ) կողմէ անձնական անզգուշ վերաբերմունքը առիթ կը հանդիսանայ հայօճախին ուղղուած քննադատական մօտեցումներու:

Հասկնալի է որ երկու կողմերու երէց սերնդականներուն մէջ ալ կան մարդիկ, որոնք այնքան ալ լայնամիտ չեն եւ անտարբեր են իրենց հայրենակիցներուն նկատմամբ: Այս բոլոր ոչ-փափաքելի երեւոյթներուն պէտք չէ տալ գաղափարական կամ խտրական արժեւորում: Նկատելի է, սակայն, որ անցնող տարիներուն ՀՀէն եկող անձի եւ տեղաբնիկ յունահայու միջեւ ամուսնութիւններու թիւը ընդամենը չորս է (բոլորն ալ՝ յունահայ այր հայաստանցի աղջիկ, եւ երբե՛ք՝ հակառակը): Այս խնդիրը արժանի է լուրջ վերլուծութիւններու, եւ կապուած է մտածելակերպի եւ հասարակական այլ բնոյթ կրող հայեցողութիւններու հետ, որոնք մեր նիւթէն դուրս են:

Ակնյայտ տարբերութիւն մը այն է, որ ՀՀէն եկած հայերը վերապահութեամբ եւ քննադատական տրամադրութեամբ կը մօտենան հայրենանպաստ դրամահաւաքներուն այն համոզմամբ, որ դրամահաւաքները չեն ծառայեր իրենց նպատակին: Գոյութիւն եւ լայն շրջանառութիւն ունի թերեւս համոզում մը, որ հայօճախը եւ առհասարակ սփիւռքեան կառոյցները ենթակայ են վերնախաւային» մտածելակերպի եւ չեն ցուցաբերեր պէտք

¹¹⁶ ԹՍԱ (2006-2016):

եղած ընդդիմութեան ոգի՝ ՀՀ մէջ տեղի ունեցած քաղաքական իրադարձութիւններու հանդէպ¹¹⁷: Այս կարծիքը, անշուշտ, այդքան ալ սխալ չէ եւ պէտք է շեշտենք, որ վերջերս համախոհներ կը շահի նաեւ դասական Սփիւռքի շրջանակներուն մէջ: Այս երկու տարբեր մօտեցումները կրնանք բացատրել հետեւեալ կերպ. հայաստանաձին հայերը, որոնք արտասահման հաստատուած են, անմիջականօրէն հետաքրքրուած են ՀՀ ներքին զարգացումներով: Անոնք շարունակական կապ ունին իրենց հայաստանաբնակ ազգականներուն հետ, կը հետեւին նաեւ հայաստանեան արբանեակային զանգուածային լրատուամիջոցներուն: Դասական Սփիւռքը միւս կողմէ, աւելի դիրագրգիռ է արտաքին բնոյթ ունեցող զարգացումներուն հանդէպ՝ ընտրելով չէզոք դիտորդի կեցուածք մը:

Բայց եւ այնպէս աւելի դրական է, որ գոյութիւն ունին հակասական կարծիքներ եւ երբեմն քննադատական տրամադրութիւն, հաշուի առնելով որ կան մեծաթիւ հայեր, որոնք ո՛չ կարծիք ունին, ո՛չ ալ ըսելիք: Անոնք կ'ընտրեն ուրացման եւ օտարացման ճամփան, որ վերջին հաշուով կ'ուղղէ զիրենք ապահայացումի:

Սալոնիկի բաղրատմամբ՝ աթէնահայ ազգային կեանքին մաս կազմող արտագաղթեալ հայերուն թիւը չնչին է¹¹⁸: Դրական է նաեւ որ Հիւսիսային Յունաստանի միւս հայօճախներն ալ գոհացուցիչ չափով ներգրուած են նոր հաստատուած հայեր: Իդէպ, Հիւսիսային Յունաստանի Սերէս քաղաքի հայօճախը լիովին նորաստեղծ է (մօտաւորապէս 100-150 հոգի) եւ անմիջական կապ ունի Սալոնիկի ազգային կառոյցին հետ:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

1880ականներէն ցայսօր Սալոնիկի հայօճախը շարունակական զանգուածային եւ որակային փոփոխութիւններ ունեցած է: Այսօր նկատառելի են որոշ կարեւոր կէտեր: Յատկապէս 1990էն մինչեւ այսօր գաղութս եւ քաղաքիս հայութիւնը կը պարզէ հետեւեալ իրողութիւնները.-

ա. Հայօճախ եւ հայութիւն չեն ներկայանար որպէս միասնական միաւոր, այլ կը բաժնուին երկու հատուածներու: Առաջին հատուածը հայօճախին կազմակերպուած, բայց փոքրաթիւ հայութիւնն է, որ կը մարմնաւորէ ազգային կեանքը իր բոլոր դրսեւորումներով: Երկրորդ հատուածը հայօճախէն դուրս, հեռաւոր կամ յարաբերական կապ ունեցող ցրուած հայութիւնն է, որ կազմակերպուած մարմին չէ, սակայն թիւով շատ աւելի մեծ է:

¹¹⁷ 2016ի ամռան Երեւանի մէջ տեղի ունեցած երեսոյններու հետեւանքով, խումբ մը հայաստանցի բողոքարարներ մօտեցան համայնքի ղեկավարներուն համայնքի անունով ցոյց կազմակերպելու հայցով: Համայնքի ղեկավարները մերժեցին առաջարկը, սակայն չխոչընդոտեցին զայն: Այդ մէկը անգամ մը եւս աւելորդ խօսակցութիւններու առիթ դարձաւ:

¹¹⁸ Թերեւս ասոր պատճառ է նաեւ այն, որ Աթենքը 4 միլիոն բնակչութեամբ քաղաք է, եւ հայկական կեդրոններու եւ եկեղեցիներու հերաւորութիւնները մեծ են:

Թերեւս կարելի է մատնանշել նաեւ երրորդ զանգուած մը՝ օտարացման ընթացքի մէջ գտնուող հայութիւնը, որուն մասին տեղեկութիւնները քիչ են, բայց կ'ենթադրուի որ ասոնք բաւական մեծ թիւ են:

Պայմանականօրէն եթէ ենթադրենք որ Սալոնիկի հայութիւնը երկու բեւեռներ ունի՝ կազմակերպուած ինքնագիտակից եւ օտարացման ենթակայ հայութիւն, ապա կը տեսնենք, որ ցրուած, սակայն ազգային ինքնագիտակցութիւնը չորացած զանգուածի ընդգրկումը, ներկայիս հայապահպանման ամենամեծ մարտահրաւերն է, որուն յաջողութեան համար պէտք է ռազմավարական աշխատանք տանի հայօճախին ղեկավարութիւնը: Լուրջ եւ հետեւողական ձեռնարկութիւններով պէտք է հնարաւոր չափով հետամուտ ըլլալ այդ նպատակի իրականացման:

Ինչ կը վերաբերի հայօճախին կազմակերպական ընդհանուր պատկերին, կրնանք նշմարել հետեւեալները.-

ա. Հայօճախը Սալոնիկ քաղաքին մէջ բաւական աշխուժութեամբ իր կարեւոր դերը, քաղաքական-հասարակական կշիռը կը պահպանէ: Միութիւնները կ'աշխատին հերթականութեամբ՝ ներկայանալով իբրեւ մէկ միասնական ուժ, առանց ներքին լուրջ հակամարտութիւններու կամ ինքնագլուխ անջատողական մօտեցումներու:

բ. Ազգային կեանքը չի տատանիր պլեկոծումներէ, ուստի հայօճախը կը գիտակցի որ ներգաղութային խաղաղութիւնը կազմակերպական կեանքի եւ քարոզչութեան հիմնաքարն է: Հայօճախին գործուն անդամները կը ցուցաբերեն պէտք եղած կամաւորական աշխատանքը՝ երեւոյթ մը, որ ընդհանրական է դասական Սփիւռքի մէջ: Սակայն կան հայեցի մասնագիտացած դաստիարակութեան առնչուող բացթողումներ, որոնք պէտք է հետապնդուին աւելի մեծ հոգատարութեամբ:

գ. Հայօճախին արտաքին պատկերը հնարաւորինս աշխուժ է յաջս յոյն հասարակութեան եւ մանաւանդ քաղաքիս քաղաքական իշխանութիւններուն: Հայօճախին ծայնը միջոց կը հասնի իր նպատակին շնորհիւ լաւ մշակուած յարաբերական կապերուն, որոնք ունին իրատեսական եւ հեռանկարային շունչ:

դ. Հայօճախին կապերը հայրենիքին եւ համահայկական մարտահրաւերներու շուրջ ամբողջական են եւ նոյնպէս՝ աշխուժ: Հայաստանեան եւ համասփիւռքեան կառոյցներու հետ կան մշտական բարենպաստ պայմաններ եւ գործակցութեան ճիգ: Ընդհանուր Հայրենիք-Սփիւռք գործակցութեան ոլորտին մէջ Սալոնիկի հայօճախը եղած է ու կը մնայ հաւատարիմ ու անմիջական: Ներսփիւռքեան յարաբերութիւններու առումով Սալոնիկի հայօճախը կը պահպանէ պարբերական կապեր ըստ անհրաժեշտութեան: Ներյունահայկական կապը մշտական է ու անքակտելի: Հայօճախս յունահայութեան ազգային կեանքին անպակաս մասն է ու գիտակից իր բոլոր պարտաւորութիւններուն եւ ազգային մարտահրաւերներուն:

Ե. Ձուլումը արագընթաց է եւ կը վերաբերի թէ՛ կազմակերպուած թէ՛ անկազմակերպ հայութեան: Հայութիւնը մեկուսացած ազգային միաւոր չէ յոյն հասարակութեան մէջ: Հայութեան ազգային յատկանիշերը եւ կենցաղը կեդրոնախոյզ չեն, ինչպէս օրինակ՝ գնչուներու եւ Թրակիոյ պոմակներու պարագային: Մշակութային առումով, հայութիւնը ընդունուած ու սիրուած ազգային միաւոր մըն է, բայց այդ մէկը կը տանի հայութեան փոփոխին մշակութային եւ ազգային ծուլումի: Յայտնի է նաեւ որ հայօճախին կառոյցները թէեւ կրնան մեծ դժուարութեամբ դանդաղեցնել այդ ընթացքը, բայց չեն կրնար կասեցնել զայն: Համայնքը այդ բոլոր դժուարութիւններուն գիտակից ըլլալով հանդերձ, ստիպուած է շարունակել իր հայապահպանման քարոզչական աշխատանքը ու երբե՛ք չբաւարարուիլ կամ չհրաժարիլ իր որդեգրած այս նպատակէն:

THE ARMENIAN COMMUNITY OF THESSALONIKI BETWEEN 1990 AND 2017

(Summary)

HOVIG KASSAPIAN (kassapianhovic1977@gmail.com)

The modern history of the Armenian community of Thessaloniki starts around the 1880s, when the church was built. The community grew due to Armenians fleeing the persecution and massacres they faced in the mid-1890s (the Hamidian massacres), and in 1909 (Cilician massacres), as well as the Genocide and the fall of Smyrna (1915-1922). The community's numbers decreased as of the late 1940s due to repatriation and emigration to the West.

The disintegration of the Soviet Union and the economic difficulties in the newly proclaimed Republic of Armenia generated an influx of ex-Soviet Armenians to Thessaloniki, who outnumbered the local Armenians.

The paper maps the organizational structure of the community, its relations with both its environment and the other Armenian subgroups of Greece as well as its transnational relations with the Armenian communities of the Balkan states. The paper focuses on the current concerns and challenges of the community, particularly on mixed marriage, integration of the incoming Armenians and matters of identity.